ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն

Թեմա՝

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ, ՈՒՍՈՒՑԻՉ, ԾՆՈՂ, ԱՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Մարտավարության հիմունքներ

Աշակերտների իմացական հետաքրքրությունների մեծացումը ՆԶՊ և ԱԿ առարկայի նկատմամբ:

Կատարող՝ Գևորգ Վարդգեսի Գրիգորյան

Ղեկավար՝ Հ.Թադևոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակությունը

Ներածություն

Գլուխ 1. Հոգեբանական եւ իմացական գործընթացների զարգացումը դեռահասների պատանիների մոտ:

Գլուխ 2. ՈՒսուցիչ-աշակերտ փոխհարաբերության առանձնահատկությունները մանկավարժական գործընթացում:

Գլուխ 3. Մարտավարության հիմունքներ

Եզրահանգում

Օգտագործված գրականության ցանկ

Ընտրել եմ այս թեման, քանի որ ուսուցիչ, ծնող, աշակերտ առողջ փոխհարաբերությունը /մանկավարժական հաղորդակցումը/ համարում եմ մանկավարժական գործունեության կորիզը, առանց որի անհնար է պատկերացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Առարկայական գիտելիքները ևս շատ կարևոր են, բայց դրանք զրոյականացվում են, երբ բացակայուն է մանկավարժական արդյունավետ հաղորդակցումը, քանի որ ուսումնական գործընթացը ոչ միայն գիտելիքների հաղորդում է և դրանց յուրացումը, այլ նաևմատաղ սերնդի դաստիարակությունը,

.Հետազոտության օբյեկտը: ՈՒսուցչի մասնագիտական գործունեության անբաժանելի մասը կազմող ուսուցիչ, ծնող, աշակերտ մանկավարժական հաղորդակցումն է:

.Հետազոտության նպատակը: Մանկավարժական պրակտիկայի փորձի վերլուծությունների արդյունքում բացահայտել մանկավարժական հաղորդակցման արդյունավետ ձևերն ու միջոցները:

.Հետազոտության խնդիրները: Հետազոտության նատակով պայմանավորված՝ աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ՈՒսումնասիրել մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները

1 .Դպրոցի մանկավարժական գործընթացում:

2. ՈՒսուցիչ - աշակերտ փոխհարաբերություններում:

3. ՈՒսուցիչ-ծնող փոխհարաբերություններում:

4.Զինված ուժեր զորակոչվոլով ընկերները դառնում են անձի սոցալիզացիայի, հասարակության ճանաչման , մարդկանց փոխհարաբերությունների անհրաժեշտ մասնիկ: Այսպիսով պատանեկության տարիքի հիմնական նորագոյացություններն են աշխարհայացքի, ինքնուրույն դատողությունների ձևավորումը, բարձրացված պահանջները մարդու բարոյական կերպարի նկատմամբ, ադեկվատ ինքնագնահատականի ձևավորումը, ինքնադաստիարակության ձգտումը: Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել պատանու հուզազգացմունքային ոլորտին, հասկանալ նրա ապրումները, պարուրել նրան սիրով ու ջերմությամբ: Վերջիններիս պակասը կարող է հանգեցնել այն բանին, որ պատանին հոգեպես օտարանա միջավայրից, իրեն զգա

միայնակ ու անօգնական, մտածի, որ ոչ ոք պատրաստ չէ լսելու և հասկանալու իրեն: Պատանուն ոչ մի դեպքում չի կարելի մենակ թողնել, քանի որ մեկուսացվածությունը շրջապատող միջավայրից կարող է սուիցիդալ մտքերի առաջացման հիմք հանդիսանալ:

Գիտահետազոտական մեթոդները: ՈՒսուցիչների, ծնողների ու երեխաների շրջանում անց են կացվել մանկավարժական հետազոտություններ՝ զրույցների և հարցումների տեսքով:

Հետազոտության փորձարկման բազան: Երևանի հ39 հիմնական դպրոց:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը:
Աշխատանքը բաղկացած է ներածությունից, տրամաբանորեն փոխկապակցված գլուխներից, եզրահանգումից և գրականության ցանկից:
Աշխատանքի ծավալն է 32էջ:

Օգտագործել եմ հիմնախնդրի հետ առնչվող՝ հայ և օտարազգի մասնագետների ուսումնասիրված և վերլուծված աշխատությունները: Օգտվել եմ նաև համացանցից:

Ներածություն

Հոգեբանություն բառը հունարեն ψυχή-հոգի, λόγος-միտք, գիտություն, որը թարգմանաբար նշանակում է գիտություն հոգու մասին:

Ռազմավարություն (հին հուն. `στρατηγία` «հրամանատարի արվեստ»), գիտություն պատերազմի մասին, մասնավորապես՝ հրամանատարի գիտություն, ռազմական գործողությունների ընդհանուր, ոչ մանրամասն հատակագիծ, որը ընդգրկում է երկար ժամանակ: Ռազմավարությունը դժվար նպատակին հասնելու մի միջոց է, նաև մարդու ցանկացած գործունեության գլխավոր միջոց:

Ռազմավարության նպատակն է, արդյունավետ օգտագործելով առկա ռեսուրսները, հասնել հիմնական նպատակին: Այն դառնում է հատկապես անհրաժեշտ որպես գործողության միջոց մի իրավիճակում, որտեղ հիմնական նպատակին ուղղակի հասնելու համար բավարար չեն դրամական և այլ միջոցները:

ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոգեբանություն

Մարդու հոգեկանի կառուցվածքը շատ բարդ է և կազմում է 3 խումբ՝

1. Հոգեկան գործընթացներ
2. Հոգեկան վիճակներ
3. Հոգեկան հատկություններ

Հոգեկան գործընթացները իրենցից ներկայացնում են իրականության դինամիկ արտացոլումներ հոգեկան երևույթների տարբեր ձևերով, և ինչպես յուրաքանչյուր գործընթաց ունեն սկիզբ, զարգացում, ավարտ և անընդհատ շարունակվում են: Եվ դրանով է պայմանավորված, որ արթուն վիճակում գտնվող մարդու հոգեկանը միշտ ակտիվ վիճակում է, առաջանում են ինչպես արտաքին ազդակների ազդեցությամբ այնպես էլ նյարդային համակարգի գրգռման շնորհիվ: Բոլոր հոգեկան գործընթացները բաժանվում են 3 տեսակի՝

1. Իմացական, որոնց օգնությամբ մարդը ճանաչում է ինքն իրեն և շրջապատող աշխարհը: Դրանք են են զգայությունը, ընկալումը, որոնք պարզ գործընթացներ են, հիշողությունը, որը միջանկյալ գործընթաց է, երևակայություն, մտածողություն ` բարդ իմացական գործընթացներ:
2. Հուզական գործրնթացները դրանք ակտիվ և պասիվ ապրումներն են:
3. Կամային գործընթացներ՝ որոշումը, կատարումը, կամային ջանքերը և այլն:

Հոգեկան գործընթացները ապահովում են անձի գիտելիքների շտեմարանի ձևավորումը, վարքի և գործունեության կարգավորումը: Հոգեկան վիճակը տվյալ պահին հոգեկան գործունեության հարաբերականորեն կայուն մակարդակն է, որը դրսևորվում է անձի ակտիվության տարբեր մակարդակներով ցածր, միջին, բարձր:

Յուրաքանչյուր մարդ օրվա ընթացքում ունենում է տարբեր հոգեվիճակներ: Հոգեվիճակները ունեն ռեֆլեկտոր բնույթ, այսինքն առաջ են գալիս տարբեր ֆիզիոլոգիական գործոնների ազդեցությամբ և նաև վերբալ /խոսքային/ ազդեցությունների հետևանքով: Վերջինս նշանակում է, որ անձի հոգեվիճակի վրա կարող է ազդել ինչպես գովասանքը, խրախուսանքը, պարսավանքը, այնպես էլ անտարբերությունը:

Առավել ուսումնասիրված են հետևյալ հոգեվիճակները՝

1.Ընդհանուր ուշադրություն, որը դրսևորվում է մասնավորապես կենտրոնացվածության ձևով, և

որի հակադիր դրսևորումը ցրվածությունն է :
2.Հուզական հոգեվիճակները, որոնք հաճախ կոչվում են տրամադրություն, մեծ դեր է կատարում մեր առօրյա ցանկացած գործունեություն կատարելիս:

Հոգեկան հատկություններ հաճախ դրսևորվում են որպես գործունեության բարձրագույն և կայուն կարգավորիչներ, որովհետև յուրաքանչյուր հոգեկան հատկություն ձևավորվում է իրականության արտացոլման արդյունքում և ամրապնդվում է պրակտիկ գործունեություն կատարելիս: Հետևաբար դրանք մարդու գործունեության արդյունքն են: Անձի հատկությունները բազմազան են, և դրանք դասակարգելիս պետք է առաջնորդվել այն հոգեկան գործընթացներով, որոնց հիման վրա դրանք ձևավորվում են: Օրինակ ինտելեկտուալ գործունեության հատկություններն են մտքի ճկունությունը, որը դրսևորվում է գործունեության պրոբլեմային իրավիճակներում, գործունեության պլանի փոփոխությամբ: Կամային գործունեության հատկություններն են վճռականությունը և համառությունը: Հուզական հատկություններն են քնքշությունը, կրքոտությունը, զգայուն լինելը:

Ժամանակակից գերտեղեկացված հասարակության մեջ դպրոցի առաջ ծառացած բազմաթիվ խնդիրների շարքում խիստ կարևոր է երեխայի հաղորդակցման ունակությունների, ինֆորմացիայի ընկալման, իմաստավորման, սեփական դիրքորոշման ինքնադրսևորմանև ստեղծագործական կարողությունների ձևավորումը:
Որպեսզի դպրոցը կարողանա կատարել հասարակական պատվերը և արժանավոր քաղաքացիներ պատրաստի, անհրաժեշտ է ուսումնառությունը հնարավորինս մոտեցնել կյանքին: Հարկավոր է զարգացնե ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնողներլ հաղորդակցման, մտավոր, ֆիզիկական, հուզական ունակությունները:
Անկախ մասնագիտությունից, յուրաքանչյուր մարդ պետք է ունենա հաղորդակցման կարողություններ ու հմտություններ, քանզի առանց հաղորդակցման հմտությունների անհնար է պատկերացնել առոզջ, նորմալ հարաբերություններ մարդկանց հետ:
Մանկավարժի, հատկապես դասվարի աշխատանքում շատ մեծ դեր և նշանակություն ենք տալիս մանկավարժական հաղորդակցմանը: քանզի դասվարը գործ ունի ոչ միայն դեռևս չձևավորված, նուրբ ու փխրուն էակների, այլ նաև նրանց ծնողների հետ : Մանկավարժական հաղորդակցման ունակություններով օժտված մանկավարժի նույնիսկ մի բառը կարող է թև տալ, ոգևորել աշակերտին, որը կօգնի նրան հաղթահարել շատ դժվարություններ, իսկ անտակտ ուսուցչի բառը, արարքը կունենա նույնպիսի և նույնիսկ ավելի խորը ազդեցություն երեխայի հոգեկանի վրա, որը երեխային թևաթափ կանի, նրա մեջ կծնի անտարբերություն ուսուցչի և նրա դասավանդած առարկայի նկատմամբ:

Մանկավարժական հաղորդակցումն ու տակտը կարևորել և արժեքավորել են շատ մանկավարժներ, հոգեբաններ՝ *Շ. Ս. Սիմոնյան* -Մանկավարժական տակտ, *Ա. Ա. Բալյան* -Մանկավարժական վարպետության հիմունքներ, Դ. Ֆ. Սամույլենկով -ՈՒսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը, *Ն. Ի. Բոլդիրև* -Դասղեկ աշխատություններում: Մանկավարժական հաղորդակցման հիմնախնդրով ընդհանուր առմամբ զբաղվել են խորհրդային նշանավոր մանկավարժներից և հոգեբաններից շատերը Դրանց թվում այդ խնդրի մշակմանն իրենց հետազոտություններում լուրջ տեղ են հատկացրել հատկապես *Ե. Ն. Մեդինսկին, Կոնստանտինովը, Բ. Գ. Անանը, Ն. Դ. Լևիտովը,* հատուկ հետազոտություններ ունեն *Վ. Ի. Ստրախովը, Տ. Պ. Բոնդարևսկայան, Գ. Ս. Պրոզորովը* և ուրիշները :

ԳԼՈՒԽ 1.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ «ՃԳՆԱԺԱՄԻ» ՏԱՐԻՔ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻՑ՝ «Դեռահասության շրջան մանկության և հասունության մեջտեղում ընկած օնտոգեն զարգացման փուլ, որը բնորոշվում է սեռական հասունացման և հասուն կյանք մտնելու հետ կապված որակական փոփոխություններով»: Այս տարիքի հոգեբանական առանձնահատկությունները ստացել են «պատանեկան բարդույթ» անվանումը:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԲԱՐԴՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԸ՝ Չափազանց մեծ զգայունություն իր արտաքին տեսքի ուրիշների գնահատանքների վրա Ծայրահեղ գոռոզություն և շրջապատի հարաբերությունների կտրական դատողություն: Ուշադրություն, որը երբեմն գոյակցում է զարմանալի կոպտության ու նկատված և գնահատված լինելու ցանկության հետ: Պայքար հեղինակություն ունեցողների, ընդհանուր օրենքների և տարածված գաղափարների հետ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «Պատանեկան բարդույթի» էությունը բաղկացած է բնորոշ այդ տարիքին և որոշակի հոգեբանական առանձնահատկություններին, շրջակա աշխարհի ազդեցության վրա վարքի ռեակցիաներից: Հոգեբանական դժվարությունների պատճառը կապված է սեռական հասունացման հետ՝ դա անհավասար զարգացում է տարբեր ուղություններով:

ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԻԿ Այդ տարիքը բնորոշվում է հուզական անկայունությամբ և տրամադրության արագ փոփոխությամբ (հրճվանքից մինչ դեպրեսիա): Առավել բուռն ռեակցիաներ ստացվում են, որբ շրջապատից մեկը փորձում է ոտնահարել դեռահասի ինքնասիրությունը: Զգացմունքային անկայունության պիկը տղաների մոտ 11 – 13, աղջիկների մոտ 13 – 15 տարեկանն է:

Զարգացման փուլերը

Երեխայի զարգացումն ընթանում է փուլերով: Նրա աճի առաջին՝ նախադպրոցական փուլը վալդորֆյան մանկավարժությունը չի շրջանցել: Այն տևում է մոտավորապես 7 տարի և ավարտվում է երեխայի հոգեկան ու ֆիզիոլոգիական հասունացմամբ: մանկավարժությունը երեխայի կյանքի այդ փուլի բնորոշ առանձնահատկությունը համարում է ընդօրինակումը: Երեխայի անհատականությունը բառացիորեն կլանում է այն ամենը, ինչ տեղի է ունենում շուրջը: Զարգացման վաղ մանկական տարիքում մեծ դեր է խաղում սենսորային (զգայական) խթանումը, այսինքն երեխային շրջապատող ձևերն ու գույները, ձայները, մարդկային խոսքը: Հետագայում սենսորային (զգայական) խթանմանը միանում է խաղի ընթացքում հասակակիցների, ինչպես նաև շրջապատի մեծերի ընդօրինակումը: Այդ առումով չափազանց կարևոր է տպավորությունների հարստությունը (Sinneserziehung – զարգացում՝ զգայարանների միջոցով) ու այն տպավորությունների ընտրությունը, որոնց հոսքը դեպի երեխան մանկավարժորեն ցանկալի է (ծնողների հոգատարությամբ ու գուրգուրանքով շրջապատված լինելը, հասակակիցների հետ օգտակար խաղերը, անաղարտ ու նախաստեղծ բնության տպավորությունները) ու համապատասխանորեն մեծերի աշխարհի, տեխնիկական ոլորտի անցանկալի, կոպիտ տպավորությունների զտումը:

Մոտավորապես 7 տարեկանում, ատամները փոխելու սկզբնական ու գլխուղեղի անատոմիական հասունացման (միելինիզացիաի) ավարտական փուլում, երեխան սովորաբար, ներքուստ արդեն պատրաստ է լինում դպրոցին: Նա ոչ միայն ընդօրինակում է շրջապատի ամեն ինչը կամ ցանկացած զբաղմունք խաղի է վերածում, այլև դառնում է ավելի նստակյաց ու կենտրոնացած: Երեխան արդեն պատրաստ է հիմնարար տարրական երևույթներն ու գործողություններն ընկալելու: Միաժամանակ՝ մանկապարտեզի տարիքից ու այնտեղի ժամանցի բնույթից, դաստիարակությունից ու ուսուցումից (զարգացում զգայարանների ու խաղերի միջոցով, բանահյուսության, հեքիաթների, համրանքախաղերի և այլն) անցումը դպրոցական իրականությանը (մտածողության տարրական ունակությունների տիրապետում, գրավոր, հաշիվ, տնային առաջադրանքների առկայություն) կատարվում է սահուն ու աստիճանաբար: Երեխայի անհատական բարոյա-էթիկական ու գեղագիտական զարգացման, ստեղծագործական երևակայության համար անհրաժեշտ նախադրյալներ համարելով: Հեքիաթները, լեգենդները, առասպելները, առակները, էպոսները, ժողովրդական բանավոր ստեղծագործության տարբեր նմուշները, նկարչությունը, բանաստեղծությունը, երգեցողությունը, պարը, թատրոնը, կրկեսը՝ այս և ուրիշ շատ բաղադրատարրեր անպայմանորեն ուղեկցում ու ամբողջացնում են վալդորֆյան դպրոցների ուսումնական գործընթացը՝ թույլ չտալով չափից ավելի չոր ու ձևական դառնալ: Ուսումնառության զուտ ինտելեկտուալ՝ ֆորմալ տարրը աստիճանաբար է ներմուծվում, ընդ որում, սկզբում հնարավորին չափով պատկերավոր կամ պատկերավոր-կոնկրետ ձևով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տարրական դպրոցում երեխայի մտածելու կարողությունները սահմանափակ կամ սոսկ պատկերավոր-կոնկրետ են: Հենց դրանով էլ դպրոցը խուսափում է երեխայի հոգեկան կյանքի վաղ ինտելեկտուալիզացումից և ֆորմալիզացումից, ժամանակից շուտ հասունացումից:

Այսպիսով, եթե իր կյանքի առաջին 7 տարիների ընթացքում երեխան ինքնին ապրում ու աշխարհը ճանաչում է ընդօրինակման միջոցով, ապա մեզ հետաքրքրող երկրորդ 7 տարիները (6-ից կամ 7-ից 14 տարեկան, դպրոցական առաջին 7 դասարանները) ընթանում են հեղինակության սկզբունքի ներքո: Հարցերով լի երեխան հեղինակություն, արտաքին հենարան է փնտրում, որից կկարողանա ստանալ իրեն հուզող հարցերի ճիշտ պատասխանը: Հաճախ ավագ եղբայրների ու ծնողների, բարեկամների և այլոց թվում այդպիսի հեղինակություն է դառնում դասվարը ու դրանով իրեն հեղինակություն ընտրած երեխայի զարգացման գործընթացում նշանակալի դեր խաղում: Այդ պատճառով էլ մանկավարժությունը առանձնահատուկ կարևորություն է տալիս դասվար-դասղեկի անհատականությանը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա հիմնական առարկաները դասավանդում է 8, երբեմն նաև 9 տարի: դասղեկին ներկայացվող պահանջները չափազանց բարձր են, քանի որ տվյալ անձնավորությանը վիճակված է աշակերտների համար երկար ժամանակ հեղինակություն լինել, ապա, որպես իդեալ դասվար պետք է պատկերացնել համակողմանիորեն զարգացած, մեթոդապես պատրաստված անհատակություն, ով իր առջև իմացական բարձր նպատակներ է դնում ու անհատապես ձգտում բարձր բարոյաէթիկական իդեալների: Փաստորեն ուսուցիչն ինչ-որ տեղ պիտի իրենով ներկայացնի այդ իդեալը, աշակերտների աչքում ներկայանա եթե ոչ ամենագետ, ապա խոր իմացությունների տեր, գործնական ու պրպտուն անձնավորություն: Այնպիսի անհատականության ի հայտ գալը, ով գոնե ձգտում է իր մարդկային իդեալին, երեխայի կյանքում կենսահաստատման ու դաստիարակության ասպարեզում էական նշանակություն է ստանում: Միջին դպրոցում դասղեկը, լիովին չհրաժարվելով կրտսեր տարիքային փուլի ուսուցման առանձնահատկություններից (շարադրման պատկերավորությունից ու ամբողջականությունից, զունագեղությունից, խանդավառությունից, արվեստով հագեցած լինելուց), պետք է աշակերտներին աստիճանաբար պատրաստի ավագ

դպրոցի: Երեխայի մոտ պիտի սկսեն ձևավորվել մտածողության ապարատն ու բավական հասկացողական միջոցներ:
Մոտ 12 տարեկանում գլխուղեղի վերջնական ֆունկցիոնալ հասունացման հետ մեկտեղ (երկրորդական ու երրորդական ասոցիատիվ դաշտերի ձևավորում, հատկապես ճակատային բլթի ոլորտում), ինչպես նաև սեռական հասունացման սկզբնավորմամբ ու անցումային վերակազմավորմամբ, երեխայի մոտ աստիճանաբար հասունանում է նոր կարողություն՝ ոչ թե ստիպողական-վաղաժամ, այլ բնական հակվածություն սեփական դատողությունների և ինքնուրույն Ֆորմալ-տրամաբանական գործողությունների հակում:
Այսպիսով, դպրոցական առաջին յոթնամյակի սկիզբն ու ավարտը (7-14, հայկական իրականությունում՝ 6-13 տարեկան), այլ կերպ՝ 1-7-րդ դասարանները, որպես երեխայի դպրոցական զարգացման առաջին փուլ ու կարևոր ուղենիշներ, կանխորոշվում են ոչ միայն վալդորֆյան մանկավարժության փորձով ու տարիքային հոգեբանությամբ (տե՛ս՝ զարգացման փուլերն ըստ Պիաժեի), այլ նաև նյարդամարդաբանության ու նյարդահոգեբանության տվյալներով (տե՛ս “Նեյրոհոգեբանության հիմունքները”, Ա.Ռ.Լուրյա, Հրատարաքչական կենտրոն “Ակադեմիա”, Մոսկվա 2007): Ինքնուրույն դատողության կարողությունը, և որպես հետևանք՝ նախկին հեղինակությունների պսակազերծում, ինքնագիտակցության ընդվզում, պատանեկան բաղիկալիզմ, զգացմունքայնություն, միայնակության և շրջապատի կողմից չհասկացվածության զգացում և այլն, դպրոցի պայմաններում ավելի սահուն են անցնում, սեռական հասունացման՝ պուբերտատի ոչ ստիպողական, ճիշտ, զարգացման ավարտի հիմնական ձեռքբերումն է: Մենք տեսնում ենք, որ ավագ դպրոցի սկիզբը չի համընկնում 12-14 տարեկանների այդ հոգե ֆիզիոլոգիական գործընթացների ավարտին, այլ տեղի է ունենում երկու երեք տարի անց՝ մոտ 16-17 տարեկանում, երբ աշակերտը փոխադրվում է 10-րդ դասարան: Միջին դպրոցի ահա այդ մի քանի տարիները սկզբունքային նշանակություն ունեն: Տվյալ փուլում անհրաժեշտ է խորացնել մտավոր – ճանաչողական գործընթացները՝ չկորցնելով հանդերձ հոգեկան կյանքի այլ ոլորտների զարգացման հետ կապը, ուսուցման ծանրության կենտրոնը փոխադրել մտավոր ոլորտ: Այդ պատճառով 5-6-րդ դասարաններից հետո հաճախ դասղեկները, հատկապես եթե մասնագիտական իրազեկության պակաս են զգում, շատ առարկաների դասավանդումը հանձնում են ավագ դպրոցի ուսուցիչներին: Դրանով է բնորոշվում միջանկյալ փուլը:
Այսպիսով դեռահասների՝ մեծահասակին հատուկ ինքնուրույն, վերացական դատողությունների հասունությունը վրա է հասնում 12-14 տարեկանից ոչ շուտ, և ավագ դպրոցի անցման նախապատրաստությունը տևում է էլի 2-4 տարի: Հենց այդ պատճառով մանկավարժությունը մտավոր զարգացման հիմնական շեշտը դնում է ավագ դպրոցի վրա: Դրանով հանդերձ երբեք չի մոռանում հումանիտար ու անհատական – անձին ուղղված բաղադրատարրերը:

Դեռահասության ընդհանուր հոգեբանական բնութագիրը

Հոգեբանություն

Դեռահասությունը մանկության և հասունության միջև օնտոգենետիկական զարգացման շրջանն է, (11-12-ից 16-17տարեկան), որը բնութագրվում, հատկանշվում է որկական փոփոխություններով՝ կապված սեռական հասունացման և <<մեծահասակների աշխարհ>> մուտք գործելու հետ Այս շրջանում անձն ունենում է բարձրացված դյուրագրգիռություն, իմպուլսիվություն, որի հիման վրա էլ հաճախ ձևավորվում են անգիտակցական սեռական հակումները: Դեռահասության տարիքում հոգեկան զարգացման հիմնական լոկոմոտիվները հանդիսանում է Ես կոնցեպցիայի փոփոխությունները, նոր, դեռևս անկայուն ինքնագիտակցության ձևավորումը, ինքն իրեն և իր

հնարավորությունները ճանաչելու փորձերը: Այս տարիքում տեղի է ունենում վերլուծահամադրական գործողությունների բարդ ձևերի կայացումը, վերացական մտածողության ձևավորումը:Անչափ կարևոր նշանակություն ունի դեռահասի՝ հատուկ <<դեռահաս>> հանրույթին պատկանելիության զգացման առաջացումը, արժեքների գիտակցումը, որոնք հիմք են հանդիսանում նրա սեփական բարոյական գնահատականների համար: Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյաէթիկական նորմերի տիրապետումը:Այս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլ նաև անձնավորության ակնառու հասունացում, որն իրականում է շրջապատող իրականության ազդեցությունների ուղեկցությամբ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցսում: Այս շրջանը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասը սկսում է առաջնորդվել իր կյանքում: Դեռահասությունը անձի զարգացման տեսակետից համարվում է ամենաբարդ շրջանը: Այս ընթացքում ձևավորվում են անձի բարոյական, հասարակական ընկալումները, վերաբերմունքը իր, շրջապատի մարդկանց և, առհասարակ, հասարակության նկատմաբ:Դեռահաս աղջիկը փթրձում է ընդօրինակել այն կնոջ կամ աղջկա վարքը, ով շրջապատում ունի մեծ հեղինակություն, և ըստ այդմ թլ, նմանակում է տվյալ անձի հագնվելու ոճը, սանրվածքը, հարդարանքը, պահելաձևը, բառապաշարը և այլն: Իսկ տղա դռահասի համար ընդօրինակման օբյեկտ է դառնում նա, ով իրեն պահում է <<իսկական տղամարդու նման>>, մեծ կամքի ուժ ուի, քաջ է, համբերատար, կարողանում է լավընկեր լինել:
Դեռահասության տարիքում օրգանիզմը լուրջ ֆիզեոլոգիական փոփոխությունների է ենթարկվում: Սկսվում է սեռահասունացումը, մոտավորապես 11 տարեկանում ակտիվորեն սկսվում է արյան մեջ արտադրվել հորմոններ, տղամարդկանց մոտ անդրոգեն հորմոններ, կանանց մոտ՝ էսարոգեն:Փոփոխվում է ոսկրային համակարգը, ինչն էլ իր հերին է դեռահասին դժվարությունների առաջ կանգնեցնում: Երեխան անընդհատ ստիպված է լինում հարմարվել իր օրգանիզմում կատարվող լուրջ փոխփոխությունների: Դեռահասության շրջանում նկատվող կենսաբանական ցուցանիշների լուրջ փոփոխությունները անդրադառնում են դեռահասի արտաքին տեսքի վրա, որոնք կարելի է բնութագրել որպես երկրորդային սեռական հատկանիշներ: հատկապես դրսևորվում են հասակի խիստ ավելացմամբ, մարմնի մկանային և ճարպային զանգվածների մեծացմամբ; Հատկապես այս վերջին ցուցանիշը իր վառ արտացոլումն է ստանում դեռահասի արտաքինի վրա: Եվ մարմնի որոշ հատվածների տգեղությունը, անհամաչափ դիմագծերը, ճարպային գոյացությունների ի հայտ գալը դեմքի վրա, գիրությունը խորապես ազդում է դեռահասի հոգեվիճակի վրա, ինչի հետևանքով նրա մոտ կարող է առջանալ թերարժեքության բարդույթ, դեպրեսիա, դիսմորֆոֆոբիա, նույնիսկ նևրոզ: Սեռական հասունացման սկիզբը մեծ չափով կախված է բնակլիմայական պայմաններից, ազգային գործոններից, ինչպես նաև դեռահասի կյանքի անհատական առանձնահատկություններից՝ առողջական վիճակ, հանգստի վիճակ և այլն: Հիշյալ առումով էլ պետքէ հավելե, որ աղջիկների սեռական հասունացման սկիզբը կարելի է համարել 11-12, իսկ տղաներինը 12-13 տարեկանը: Դեռահասության տարիքում դրսևորվող կամակորությունը հաճախ կապված է սկզբունքայնության, անկախության և ինքնուրույնության մասին ունեցած սխալ պատկերացման հետ: Է.Ն.Դևսը հետազոտելով դեռահասների բարոյական հասկացությունների էությունը հանգեց այն եզրակացությանը, որ դեռահասների կողմից բարոյական կատեգորիաների ըմբռնումը կրումէ ձևական , մակերեսային բնույթ:Հոգեբաններն ուսումնասիրել են մի կողմից դեռահասների մեջ ձևավորվող համոզմունքների, բարոյական գաղափարների, հասկացությունների, դիրքորոշումների և, մյուս կողմից, նրանց արարքների, գործողությունների,

կոնկրետ վարքագծի միջև եղած հարաբերությունները: Ա.Լ. Մալիվանովն այդ տեսակետից դեռահասներին բաժանել է չորս խմբի.
1. դեռահասներ, որոնք իրենց վարքում ղեկավարվում են իրենց կողմից լավ գիտակցված դրական բարոյական նորմերով, և որոնց մոտ խոսքի և գործի միջև հակասություն չկա,
2. դեռահասներ, որոնց մոտ համընկնում են բարոյական հասկացությունների զարգացման ցածր մակարդակն ու վարքը,
3. դեռահասների մի փոքր խումբ /առանձին աշակերտներ/ առանձնանու է վարքի բարոյական նորմաների իր քաջատեղյակությամբ, բայց իր համար անհրաժեշտ չի համարում վարվել ըստ այդ նորմերի,
4. դեռահասներ, որոնք դեռևս չեն տեսնում, չեն հասկանում այնկապը, որ գոյություն ունի իրենց հայտի բարոյականության պահանջների և իրենց առօրյա արարքների միջև:

Ինչպես գիտենք դեռահասությունը համարվում է նաև ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում ճգնաժամն ընթանում է ավելի բուռն ու ունենում առաել տևական բնույթ, քան մյուս տարիքային ճգնաժամերի ժամանակ: *Բոժովիչը* դա բացատրում էր նրանով, որ դեռասահասի մտավոր և ֆիզիկական զարգացումն ավելի արագ է ընթանում, հանգեցնելով դեռահասի մոտ նոր պահնջմունքրեի ձևավորման, որոնք րեն կարող հաղթահարվել քանի որ դպրոցակաը դեռ չունի բավականաչափ սոցիալական հասունություն:
Դպրոցահասակ տարիքում մեկ այլ կարևոր տարիքայն ճգնաժամ է դեռահասության տարիքի ճգնաժամը: Համեմատաբար հանգիստ կրտսեր դպրոցական տարիքից հետո երեխան հանդիպում է մեկ նոր անցումային շրջանի, երբ կրկին վերափոխվում են մեծահասկաների հետ փոխհարաբերությունները և փոխվում են զարգացման մի շարք գործոններ: Որպես այս ճգնաժամի կարևոր բնութագրական *Ս.Հոլլն* առանձնացնում է ինքնագիտակցության ճգնաժամը, որը հաղթահարելով մարդը ձեռք է բերում “անհատականության զգացում”: Սա քառտիկ, անկայուն շրջան է, երբ դեռահասի մոտ միաժամանակ կարող են ծագել իրար շատ հակասող բազում հույզեր և հոգևիճակներ, տարաբնույթ ձգտումներ և արժեքներ: Հակադիր և հակասական գծերը, ձգտումները համագոյակցում և հակադրության մեջ են մտնում՝ պայմանավորելով երեխայի բնավորության, վարքի և անձնային անկայունությունը:
Այս ճգնաժամը ներքին և արտաքին կոնֆլիկտների արտահայտման բուռն շրջանն է: Դեռահասության ճգնաժամի պատճառ է հանդիսանում երեխայի ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեկան զարգացման տեմպերի անհամապատասխանությունը: Այս տարիքի բուռն խնդիրները կապված են դեռահասների կարևրագույն պահանջմունքների բավարարման հետ, որոնց թվին են պատկանում՝

- ֆիզիոլոգիական պահանջմունքները, որոնք դրդում են դեռահասներին ֆիզիկական և սեռական ակտիվության
- ապահովության պահանջմունք, որը դեռահասը սկսում է փնտրել իր հասակակիցների շրջանում
- ընտանիքից անկախ լինելու պահանջմունքը /ինքնահաստատում, ինքնուրույնություն/
- կապվածության պահանջմունք
- հաջողության պահանջմունք՝ սեփական ուժերը փորձելու և հաջողության հասնելու պահանջմունք
- ինքնիրականացման և սեփական “Ես”-ի զարգացման պահանջմունք:

Դուրս գալով մանկությունից, բայց դեռևս մուտք չգործած հասունության շրջան՝ դեռահասը հանդիպում է հասարակության կողմից ներկայացվող դեռևս բոլորովին նոր, “ոչ մանկական” սոցիալական պահանջների և ստիպված լինում ստանձնել նոր դերեր: Այս փուլում դեռահասը կանգնում է մի մեծ խնդրի լուծման առջև՝ միավորել և վերլուծել մինչ այժմ ունեցած

պատկերացումներն անձի մասին և ինտեգրել սեփական Ես-ի մասին բազմաթիվ պատկերները մեկ միասնական պատկերի մեջ:
Ճգնաժամի հաղթահարման դեպքում դեռահասը ձեռք է բերում մի շարք կարևոր նորագոյացություններ՝ սեփական Ես-ի գիտակցում, ինքնահասկացում, սեփական անհատականության գիտակցում, ինքնագիտակցության զարգացում: Դեռահասը ձեռք է բերում "հասունության" զգացում, կողմնորոշվում իր սոցիալական դերերում, գտնում իր տեղը շրջապատում:

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատմական ակնարկ-Կարծում եմ դեռահասության մասին հանգամանորեն խոսելուց առաջ նախ և առաջ ճիշտ կլինի հայացք գցել դեռահասության տարիքի մասին տարբեր ժամանակաշրջաններում եղած պատկերացումներին և ծանոթանալ տարբեր հոգեբանների մոտեցումներին:
Դեռահասության տարիքի վերաբերյալ գոյություն ունեն մեծաթիվ հիմնարար հետազոտություններ, տեսություններ, հիմոթեզեր: Սովորաբար, դեռահասության տարիքը դիտվում է որպես անցումնային, ճգնաժամային շրջան, սակայն այն հաճախ դիտարկվում է որպես սեռական հասութնացման շրջան: Ականավոր հոգեբան *Լ.Ս.Վիգոտսկին* դեռահասության տարիքում առանձնացնում էր հասունացման երեք տեսակ՝ սեռական հասունացում, օրգանական հասունացում և սոցիալական հասունացում: Շիմպազների մոտ օրգանական և սեռական հասունացման կետերն համընկնում են, դա տեղի է ունենում մոտավորապես հինգ տարեկանում, երբ այդ մարդանման կապիկների մոտ ավարտվում է մանկությունը: Հասարակության պատմության զարգացման ընթացքում նմանատիպ համընկում տեղի է ունեցեկլ նաև մարդու մոտ, որը նշվում էր որպես անցումային ծիսակարգ, քանզի որպես օրինաչափություն օրգանակա հասունացումը տեղի էր ունենում մի քանի տարի ավելի ուշ: Ժամանակակից երեխայի մոտ զարգացման բոլոր գծերն առանձնացված են: Այժմ նախ և առաջ դիտարկվում է երեխայի սեռական հասունացումը, այնուհետև օրգանական, և միայն մի քանի տարի անց սեցիալական հասունացումը: Այս բաժանումն էլ պայմանավորել է դեռահասության տարիքի առնաձնացումը որպես տաևրիքային առանձին շրջան:
Ֆրանցիացի կենսագրագետ և պատմաբան *Ֆ.Արիեսը* ենթադրում էր, որ դեռահասությունը որպես առանձին տարիքային շրջան առանձնացել է 19-րդ դարում, իսկ ահա 20-րդ դարն ինքնին վերաշվեց << teenager>>- ների դարաշրջանի: Սակայն այժմ էլ անթաքույց տարաձայնություններ կան դեռահասության տարիքային սահմանների միջև, որովհետև օրինակ ԱՄՆ-ում, և այլ զարգացած երկրներում դեռահասությունը տեևում է մոտավորապես 10 տարի՝11-20: Իսկ Հայաստանում և ԱՊՀ այլ երկրներում այդ սահմաններն ավելի փոքր են մոտավորեպես 6-7 տարի: Դեռևս 20-րդ դարի 30 –ական թվականներին *Պ.Պ Բլոնսկին* և *Լ.Ս.Վիգոտսկին* գտնում էին, որ դեռահասության շրջաննի սահմանները զգալիորեն կախված են հասարակության զարգացվածության մակարդակից: Համաձայն Լ.Ս.Վիգոտսկու տեսակետների դեռահասությունը ամենաանկայուն և փոփոխական շրջանն է, որը բացակայում վայրենիների մոտ, որը անբարենպաստ պայմանների առկայության պայմաններում սահմանափակվելու միտում ունի, որը հաճախ հանդես է գալիս որպես <<հազիվ նկատելի գիծ>> սեռական հասունացման ավարտի և վերջնական հասունացաման գալստյան միջև: 20-րդ դարի երկրոդ կեսին *Բ.Զազզոն* ուսումնասիրելով հասարակության սոցիալ-տնտեսական տարբեր խավերի դեռահասներին ՝ եկավ այն եզրահանգմանը, որ բոլոր խավերում էլ դեռահասությունը սկսվում է միևնույն տարիքում, սակայն դեռահասության ավարտի հետ կապված իսկապես կան տարբերություններ, օրինակ ցածր որակավորում ունեցող մասնագետների

շրջանում , իրենք անձամբ իրենց դեռահասության ավարտը դիտում են 19 տարեկանը, արվեստ ոլորտի անձանց մոտ 21 տարեկան և այլն: Եվ շատ հոգեբաններ հաշվի առնելով այս տարբերությունները, ի նկատի ունենալով հասարակության ահռելի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա, փորձել են առանձնացնել դեռահասության միջին սահմաններ, գտնելով որ այն տևում է մոտավորապես 4-7 տարի:
Ցավոք սրտի պետք է ասել, որ մեր հասարակությունը դեռևս այնքան զարգացած չէ, որպեսզի հստակորեն առանձնացնի դեռահասության համար բնութագրական սոցիալ-մշակութային նորմերը: Գրեթե յուրաքանչյուր մեծահասակի հասկանալի ու հասանելի է, թե ինչպես պետք է վերաբերվել երեխայի հետ, և գրեթե յուրաքանչյուր երեխա էլ գիտի թե ինչպես պետք է իրեն դրսևորի մեծահասակների հետ: Իսկ ինչպե՞ս վարվել դեռահասի հետ: Հարց որի պատասխանը չգիտեն շատ ծնողներ, իսկ դա գալիս է նրանից, որ նրանք չունեն իրազեկվածություն դեռահասների հոգեբանական առանձնահատկությունների մասին: Օրինակ կոպիտ սխալ է երբ ծնողը դեռահասին վերբերվում է որպես երեխայի:
Ստ. Հոլլը գտնում էր, որ դեռահասությունը անձի զարգացման ընթացքում համապատասխանում է մարդկության պատմության զարգացման ընթացքում ռոմանտիզմի դարաշրջանին: Այդ միջանկյալ փուլը՝ մանկության- որսի դարաշրջանի և հավաքչության դարաշրջանը՝ մեծահասակություն, համարվում է քաղաքակրթության զարգացման դարաշրջան; Ստ. Հոլլը այդ շրջանը քառսի ժամանակաշրջանի վերարտացոլումն է, երբ կենդանիները, անտրոպոիդները, կիսաբարբարոս միտումները բախվում էին սոցիալական կյանքի պահանջների հետ: Նրա կարծիքով <<խռովարար>> դեռահասությունը ՝ հագեցած սթրեսներով և կոնֆլիկներով, որում գերիշխում է անկայունությունը, խանդավառությունը, հակադրման օրենքները, խորապես ներթափանցել են հոգեբանության մեջ:

Ստ. Հոլլը, առաջինը նկարագրելով դեռահասների խառնվածքի, էության ամբիվալենտությունն ու պարադոքսալությունը, առանձնացրեց դեռահասությանը բնորոշ մի շարք հակադրություններ.

- Չափազանց մեծ ակտիվությունը կարող է հանգեցնել ուժասպառության
- Բուռն ուրախությունը վերածվել տխրության
- Ինքնավստահությունը փոխարիվել ընկծվածությամբ և վախկոտությամբ
- Եսասիրությունը կարող է հանկարծակիորեն վերածվել այլասիրության
- բարձր բարոյական նկրտումները փոխարինվում են ցածր շարժառիթներով
- շփման կիրքը ՝ փակվածությամբ
- նուրբ զգայունակությունը՝ անտարբերությամբ
- հետաքրքրասիրությունը՝ մտավոր անտարբերությունը
- կարդալու նկակտմամբ անհագ ցանկությունը անուշադրության է մատնվում
- բարեփոխուներ կատարելու ցանկությունը հանգում է
- կրքոտ դիտարկումների ցանկությունը ՝ անսպառ քննադատություններով:

Հատկապես հետաքրքիր է *Դ. Վ. Էլկոնին* տեսակետը դեռահասության վերաբերյալ: Նա դեռահասի զարգացման մեջ առանձնացնում էր օբյեկտիվ և սուբյեկտիվ հասունություն: Որպես օբյեկտիվ հասունություն դիտվում է դեռահասի պատրաստականությունը մեծահասակների հասարակական կյանքին՝ որպես այդ հարաբերրությունների լիիրավ անդամի:
Դեռահասության տարիքում հասունության օբյեկտիվ գործոնների տարրեր կարելի է դիտարկել դեռահասի վերաբերմունքը ուսուցման և աշխատամքի նկատմամբ, մեծահասակների և հասակակիցների հետ փոխհարաբերություններում, երեխաների և ծերերի նկատմամբ վերաբերմունքում:Սրանք դրսևորվում են .

- Ինտելեկտուալ ոլորտում-գիտելիքների յուրացման ինքնուրույնություն, ինքնակրթության ձգտում,

• Սոցիալ-բարոյական ոլորտում-օգնություն և սատարանք մեծահասակներին, բարոյաէթիկական պատկերացումների համադրությունը սեփական վարքի ձևերի ընտրությանը,
• Հակառակ սեռի ներկայացուցիչ հասակիցների հետ ռոմանտիկ հարաբերություններում-ազատ ժամանակի անցկացման ձևեր՝ հանդիպումներ, երեկույթներ,
• Արտաքին տեսքում – նորաձևության տենդենցների համապատասխանելու ձգտում, պահելաձևի, խոսեալոչի համապատասխանեցումը ժամանակի թելադրանքին:

Սուբյեկտիվ մեծահասակությունը կամ մեծահասակության զգացումը բնութագրվում է դեռահասի՝ իր նկատմամբ որպես մեծահասակի, այլ ոչ թե փոքր երեխայի վերաբերմունքի: Մեծահասակության հիմնական ցուցանիշ ծառայում են.
• Հարգանքի, վստահության, իր ինքնուրույնության ճանաչման պահանջմունքները,
• Ցանկության <<պաշտպանելու>> իր կյանքի որոշ ոլորտներ մեծահասակների միջամտությքններից,
• Սեփական վարքագծի առկայություն, չնայաց այն հանգամանքին, որ մեծահասակներն ու հասակակկիցները կարող են նրա այդ գաղափարների ու վարվելաձևի հետ համաձայն չլինել:

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Ճգնաժամային ախտանշաններից են անլիարժեքության զգացումը ընկճվածությունը, հիպոխոնդրիկ տագնապները, սևեռուն կենտրոնացումն այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ «ո՞վ եմ ես», «ինչո՞ւ եմ ծնվել», «գեղեցի՞կ եմ. թե՞ տգեղ», «ինչպե՞ս են ինձ ընկալում ուրիշները», նույնականության կորուստը, դեպերսոնալիզացիայի երեւույթը (Ըստ Խ. Ռեմշմիդտի՝ «դեռահասները բողոքում են այն բանից, որ իրենց ոչ ոք չի հասկանում, որ իրենք միայնակ են, չեն գտել իրենց տեղը կյանքում, հարգանքի արժանի չեն, չունեն իրենց սեփական եսը և այլն), այսպես կոչված Տերզիտի բարդույթը կամ դիսմորֆոֆոբիան (երեխաներին թվում է, թե իրենց մարմնի մասերը սովորականից տարբերվում են՝ մեծ են կամ փոքր, տգեղ են), նարցիսիզմը (Երեխաները չափից դուրս կենտրոնանում են սեփական անձի վրա, գերագնահատում իրենց հատկությունները, խիստ զգայուն են դառնում քննադատության նկատմամբ, միաժամանակ նրանց տանջում է անլիարժեքության զգացումը, մեծերի հանդեպ նեգատիվիզմը, ծնողների հետ վեճերը, տանից փախուստները, օրինազանց վարքը (նարկոմանիա, ագրեսիվ վարք), ինքնասպանության մտքեր և փորձերը, սեռական բնույթի խանգարումները (օնանիզմ, հոմոսեքսուալ վարք, սեռական սանձարձակություն, սեռական օրգանների նորմալ լինելու, իմպոտենտության կասկածներ, սեռական ասկետիզմ՝ դեռահասները մերժում են այն ամենը, ինչ վերաբերում է սեռական կյանքին), զանազան գաղափարական հոսանքների մեջ մտնելը, կուռքերի ստեղծումը (հանցագործ աշխարհի ներկայացուցիչներ, երգիչներ):
Դեռահասության տարիքի հոգեախտաբանությունը շատ դեպքերում ճգնաժամային ախտանշանների հիվանդագին ուռճացածություն է հիշեցնում: Օրինակ, չափազանց գեր լինելու հիվանդագին հավատը կարող է հանգեցնեք այսպես կոչված երկրորդային նյարդային անորեքսիայի, որի դեպքում հիվանդներն ընդհանրապես հրաժարվում են սննդից: Նեգատիվիզմը, ագրեսիվությունը, օրիգինալ երևալու ձգտումը, օրինազանց վարքը, ծայրահեղ, հիվանդագին ձևով են սկսում դրսևորվել գեբոիդային շիզոֆրենիայի դեպքում: Դեռահասության շրջանում ի հայտ եկող, հիվանդագին երևույթներից է հոմոսեքսուալիզմը, որը, ըստ *Ա. Մոլի*, պայմանավորված է այս տարիքում սեռական պահանջմունքի գերակտուալացմամբ և պահանջմունքի օբյեկտի հարցում առկա անորոշությամբ: Ինչպես երևում է դեռահասության տարիքի բնութագրերից, ճգնաժամային ախտանիշերի և հոգեախտաբանության առանձնահատկություններից, երեխան փորձում է ինքնահաստատվել իր սեռի մեջ, ընդունել և ուրիշներին ընդունել տալ սեփական անձի սեռային լիարժեքությունը և գրավչությունը, սեփական եսի, որպես տվյալ սեռի ներկայացուցչի արժեքը,

սեռադերային վարքի կանոնները եւ վերջապես հագուրդ տալ նոր ծագած պահանջմունքներին: Այս խնդիրների լուծման ճանապարհին ի հայտ եկող խոչնդոտներն են դեռահասին հասցնում ճգնաժամային վիճակի: Այդ խոչընդոտների մեծ մասը, թերևս, պայմանավորված են այս տարիքի նկատմամբ հասարակության ունեցած դիրքորոշումներով, վերաբերմունքով, դաստիարակչական մեթոդներով: Այդ է վկայում, օրինակ, այն հանգամանքը, որ դաստիարակչական այլ մոտեցումներ, ավանդույթներ ունեցող շատ հասարակություններում դեռահասության ճգնաժամը կամ ընդհանրապես բացակայում է խիստ հազվադեպ է ի հայտ գալիս (*Մ. Միդ, Բ. Մալինովսկի, Ռ. Բենեդիկտ* և ուրիշներ): *Խ. Ռեմշմիդտը* նման անճգնաժամային անցումները մի շարք հանգամանքներով է բացատրում, նախ, այդ հասարակություններում հստակորեն սահմանազատված են մեծերի և երեխաների ստատուսները: Մանկական ստատուսից մեծերի ստատուսին անցումը կտրուկ է կատարվում. դեռահասներին ձեռնադրում են կին և տղամարդ, որից հետո նրանք ընդգրկվում են հասարակության կյանքի մեջ: Շատ հասարակություններում սեռական հարաբերությունները դեռահասներին արգելված չեն: Այդ հասարակություններում թույլ է դեռահասների հասարակական եւ հոգեբանական ճնշումը: Պետք է ասել իհարկե, որ արևմտյան մշակույթում նույնպես դեռահասության ճգնաժամը պարտադիր երևույթ չէ: Ըստ որոշ հետազոտությունների (Դ. *և Ջ. Օֆեր*), դեռահասների մեծ մասն առանց ճգնաժամի են անցնում այս տարիքը: Դեռահասության տարիքում շեղման նախադրյալները

Պետք է նշենք, որ բոլոր տարիքային փուլերի մեջ հատկապես առանձնանում է դեռահասության տարիքը: Սա նաև համարվում է անցումային տարիք: Այս տարիքում տեղի են ունենում շատ փոփոխություններ՝ փոխվում են դեռահասի կյանքի և գործունեության պայմանները, կոլեկտիվում նրա կարգավիճակը, դեռահասի մոտ առաջանում է ինքնաճանաչման պահանջմունքը, ձևավորվում են սեփական հայացքները, փորձում է գնահատել իր արարքներն ու հնարավորությունները: Սովորաբար այս տարիքում դեռահասների և ծնողների միջև առաջանում են որոշակի խնդիրներ և դա կապված է այն բանի հետ, որ ծնողը միշտ երեխային ընդունում է որպես փոքր երեխա: Բայց չէ՞ որ արդեն դեռահասության տարիքում ձևավորվում է մեծ լինելու զգացումը, որն առաջանում է ինքնուրույնությանն ու անկախությանը ձգտելու միջոցով: Այսպիսով դեռահասը այն անձն է, որը գտնվում է ձևավորման որոշակի մակարդակում, այսինքն այնքան չի զարգացել, որ համարվի մեծ, բայց և այնպես նա կարող է որոշակի հարաբերություններ ստեղծել իր շրջապատողների հետ և հետևել իր արարքներին: Դեռահասների դաստիարակությանը տրվելը, վարքի կանոններն ու նորմերը չպահպանելը գիտության մեջ անվանում են շեղում: Սովորաբար դեռահասի նորմալ վարքը ենթադրում է նրա փոխհարաբերությունները միկրոսոցիումում, որը համապատասխանում է նրա զարգացման ու սոցիալիզացիայի հնարավորություններին ու պահանջմունքներին:

Բնականաբար սոցիալական դեզադապտացիայի դեպքում առաջ կգա վարքի որոշակի շեղումներ: Շեղվող վարքը պայմանավորված է սոցիալական նորմերի և կանոնների խախտմամբ: Նման երեխաները սովորաբար ագրեսիվ են, հետ են մնում ուսման կամ աշխատանքային գործունեությունից, բացակայում են տնից, թափառում, զբաղվում հարբեցողությամբ:

Դեռահասի մոտ վարքի շեղման պատճառներ կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները.

1. Կենսաբանական գործոն, որն արտահայտում է երեխայի օրգանիզմում ոչ ցանկալի ֆիզիոլոգիական կամ անատոմիական հատկությունների առկայությամբ, որոնք պահանջում են նաև բժշկական միջամտություն: Դրանք կարող են լինել գենետիկական, որը անցնում է ժառանգաբար՝ մտավոր զարգացման խախտում, տեսողության, լսողության դեֆեկտներ և այլն: Կարող են լինել հոգեֆիզիոլոգիական, որը կապված է կոնֆլիկտային իրավիճակների հետ, որոնք բերում են սոմատիկ, ալերգիկ, տոկսիկ հիվանդությունների: Եվ իհարկե կարող են լինել

ֆիզիոլոգիական՝ ներառելով խոսքի արատները:
2. Հոգեբանական գործոն: Սա սովորաբար արտահայտվում է ներվային, հոգեկան հիվանդություններով, ներոսթենիայով:
3. Սոցիալ-մանկավարժական գործոն: Արտահայտվում է ընտանեկան, դպրոցական դաստիարակության թերություններով, որով պայմանավորված է երեխայի անհատական հնարավորությունները: Այս երեխաները սովորաբար դպրոցին սկզբնական լինում են պատրաստված՝ բացասական վերաբերմունք են ցուցաբերում տնային առաջադրանքներին, գնահատականի նկատմամբ անտարբեր են, որն էլ և վկայում է նրա ուսումնական դեզադապտացիայի մասին:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատանեկության տարիքը ընդգրկում է 15-21 տարեկանը: Սովորաբար առանձնացվում է պատանեկության 2 փուլ՝ վաղ պատանեկություն(15-17)և պատանեկություն(18-21): Պատանեկությունը իր մեջ է կենտրոնացնում անցած տարիքների նորագոյացությունները, և դրանք արտահայտվում են պատանիների մոտ նոր որակներով: Հենց այդ ժամանակ էլ տեղի է ունենում սեփական անկրկնելիության, անհատականության, յուրօրինակության գիտակցում: Մենակության զգացում առաջացնող ներքին լարվածությունը մեծացնում է հասակակիցների հետ շփման պահանջմունքը և միաժամանակ բարձրացնում է ընտրողականությունը: Այդիսկ պատճառով էլ պատանեկության տարիքում մեծ նշանակություն է ձեռք բերում սերն ու ընկերությունը:Սա տարիք է ուրիշ մարդկանց հետ մոտիկ, բաց հարաբերություններ հաստատման համար: Պատանեկան տարիքի դպրոցականների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջող դրվածքը պայմանավորված է նրանց բնավորության ախտորոշմամբ, տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այդ տարիքը համարվում է ոչ միայն կենսաբանական նորագոյացումների, այլև սոցիալական փոփոխությունների տարիք: Նրանց մոտ առաջանում են արտակարգ ակտիվություն, ինքնուրույնություն, ինքնագիտակցության զարգացում, օրգանիզմի վերակառուցում, հատկապես սեռական հասունացման հետ կապված չափահասության զգացում, ռոմանտիկա և երևակայություն: Պատանին իր բարոյական արժանապատվությունը տեսնում է իր ինքնուրույնության, անկախության մեջ, իսկ նրա ուժերն ու հնարավորությունները դեռևս թույլ չեն տալիս ամեն ինչում հույսը դնել միայն իր վրա:
Սույն հոդվածում փորձում ենք բացահայտել պատանու մտածողության մեջ կատարվող որակական փոփոխությունները, գտնելով, որ կոնկրետ պատկերավոր մտածողության հետ մեկտեղ զարգանում է դեռահասի վերացական մտածողությունը, գործնական մտածողության հետ՝ տեսական և ռեֆլեքսիվ մտածողությունը, ուժեղանում է մտքի ինքնուրույնությունն ու քննադատականությունը, զարգանում են համեմատման, հակադրման, վերլուծման, վերացարկման մտավոր գործառնություններ կատարելու կարողությունները, նրանք գործառնում են ներհամակարգային և միջհամակարգային զուգորդումներով, զարգանում է ստեղծագործական մտածողությունը և այլն:
Մանկավարժության և հոգեբանության տեսությունների մեջ կա այն կարծիքը, որ պատանեկան տարիքի դպրոցականի մոտ վտանգ է ներկայացնում հուզական քնկոտությունը:Վսեմ հուզական խոսքերը դեռահասի համար մնում են դատարկ հնչյուն, եթե նրա սիրտը քնած է: Իսկ այս պարագայում ճշմարտությունները չեն կարող դառնալ համոզմունքներ: Այնտեղ, որտեղ հույզերը չեն մասնակցում իմացության որոնմանը, դեռահասը իր նկատմամբ չի կարողանում կիրառել այն

ճշմարտությունները, որ նրա գիտակցության առաջ բացում է դաստիարակը։ Դաստիարակությունը չի դառնում ինքնադաստիարակություն, որը, Վ. Սմայլսի խոսքերով արտահայտված, «մարդու լավ դառնալու գիտակցված ձգտումն է», այդ պատճառով էլ դադարում է դառնալ իսկական դաստիարակություն։
Որպեսզի պատանեկան տարիքի հակասությունները չհանգեցնեն բախումների և ձախողումների, պետք է նրա մեջ դաստիարակել մտքի հասունություն, գաղափարական նպատակասլացություն, կայունություն և ակտիվ կենսադիրքորոշում։ Մեր ուսումնասիրությունները մի անգամ ևս հաստատել են, որ շուտ հասունացող պատանիների մոտ նկատվում է գիտակցության բարձր մակարդակ, որ ֆիզիկապես կատարյալ ավագ դեռահասների մոտ մտավոր հասունացումը շուտ է ձևավորվում, որ բազմանդամ ընտանիքներում մեծացող ավագ դեռահասների մոտ կա ընդգծված հետամնացություն մտավոր հասունացման գծով, որ շուտ հասունացող տղաները լայն հետաքրքրություն են հանդես բերում իրենց անձի նկատմամբ և արժանանում են շրջապատի, հատկապես հակառակ սեռի համակրանքին և այլն։ Մի այլ հանգամանք ևս. տղաների մեկ երրորդը և աղջիկների կեսը հասունացման ընթացքում մտահոգվում են իրենց հասակով, քաշով և կառուցվածքով՝ վախենալով մնալ կա՛մ փոքր, կամ մեծանալ տձև։ Եթե դրան էլ ավելացնենք աղջիկների կողմից դեմքի գեղեցկությանը, մաշկի գույնին և նրբությանը հետևելու միտումը, պատկերը կամբողջանա։ Վերջին տարիներին լույս տեսած մանկավարժական և հոգեբանական գրականությունը, գիտական աշխատությունները և մեր ուսումնասիրությունները մի անգամ ևս մեզ համոզեցին, որ պատանիները հանդես են բերում որոշակի պահանջմունքներ, որով շատ բանով պայմանավորված է նրանց ակտիվ կենսագիրքորոշմամբ։ Դրանց շարքին են դասվում անկախության ձգտման, սիրո, հաջողության հասնելու և անվտանգության պահանջմունքները։
Պատանու բնութագրի գլխավոր և հիմնական մասն են կազմում նրա սեռական հետաքրքրությունները, որոնց մասին մանրամասն խոսվում են նաև այլ աշխատությունների մեջ։ Նախորդ տասնամյակների հետ համեմատած՝ հսկայական փոփոխություն են կրել սեռական առաջին փոխհարաբերության, սեռական կապերի հաճախականության, նրա գնահատման, զուգընկերոջը շուտ շուտ փոխելու մեխանիզմները։ Եվ դա բացատրվում է նրանով, որ սեռազգացողությունը բերում է ավելի շատ հաճույք, ավելի քիչ կոնֆլիկտներ և սթրես, պատանիների և աղջիկների սեռական կապերը ավելի շուտ պայմանավորված են սիրով, հավատարմությամբ և ընկերությամբ, որ սեռական կապերի բազմազանությունը այլևս չի կապվում քաղաքային և գյուղական շրջանների պայմանականությունների հետ։ Բայց կան նաև զարգացմանն ու դինամիկ հասունացմանը խանգարող, դրանք արգելակող այլ պատճառներ։ Դրանք են՝ սոցիալ-տնտեսական դժվարությունները, մեծերի կողմից պատանիների արժանապատվության ոտնահարումը, ավագ դեռահասների տնտեսական և կենցաղային կախվածությունը մեծահասակներից, էգոցենտրիզմ ծնող պայմանների գոյությունը, պատանիների մոտ սեռազգացողության՝ սեքսի մասին եղած հակասական կարծիքները, հասարակական կյանքին ավագ դեռահասների մասնակցության արգելքն ու սահմանափակումը և այլն։ Բայց պատանիների ու աղջիկների հասունացման ընթացքում առաջանում են նաև հոգեսոցիալական բնույթի այլ հակասություններ ևս։ Դրանք են՝ հասունացման ձգձգման պատճառով մեծահասակների իրավունքներից օգտվելուց դեռահասների զրկվելը, ավագ դեռահասների մոտ առաջացած հակասություններին ավագների՝ ծնողների և ուսուցիչների անհարկի միջամտելը, ավագ դեռահասների մոտ կենսաբանական հասունացման և սոցիալական կարգավիճակների միջև առաջացած հակասությունը, ավագ դեռահասների մոտ անկախության ձգտման և նրանց իրական հնարավորությունների միջև եղած հակասությունը, մեծերի հետ կարծիքներում ունեցած հակասությունները, այսպես կոչված, «սերունդների պայքարի» հակասությունը։ Դրանց մենք

հանգել ենք վերջին տասը տարիների և հատկապես սոցիալ-տնտեսական հարաբերությունների, շուկայական հոգեբանության թագավորման ընթացքում, արձանագրելով, որ պատանեկան տարիքի դպրոցականը ձեռք է բերել՝ ինքնուրույնության ձգտում և հասունության զգացում, տեսակների և հայացքների մեջ համոզվածություն, իրեն մեծ պատկերացնելու միտում, անկախության հասնելու նպատակադրում, քննադատական մոտեցում ուրիշների և հատկապես մեծերի նկատմամբ, շրջապատի թերությունները նկատելու և վերհանելու կարողություն, հեղհեղուկ տրամադրություն՝ մե՛րթ ուրախ և նախաձեռնող, մե՛րթ տխուր ու թախծոտ բնավորություն: Սակայն պատանու բնութագիրը լրացնում են նրա մոտ եղած թերությունները վարքում: Դրանք են՝ հանդգնությունը, գրգռվածությունը, համառությունը, կոպտությունը, որոնք սակայն հիմնվում են որոշակի պատճառների վրա: Մենք դրանք համարում ենք՝ մեծերի տակտի բացակայությունը, պատանու կամ աղջկա ինքնուրույնության ոտնահարումը, նրանց նկատմամբ սխալ կամ անարդարացի վերաբերմունքը, դեռահասի կողմից բարոյականության առանձին նորմերի սխալ ըմբռնումը, շրջապատի և հատկապես մեծերի բացասական օրինակը, պատանու և աղջկա կամքի ոչ բավարար զարգացումը, բանավիճելու կամ կուլտուրական վարքին ընտելանալու կարողության պակասը:

Պատանիների մոտ ժամանակավոր թերություններ են նաև անկարգապահությունը, որը տղամարդկության սխալ պատկերացում է, անհամարձակությունը, խաբեբայությունը, որը վախի կամ ամոթի զգացման արդյունք է: Ընտանեկան դաստիարակության սոցիոլոգիայով զբաղվող մանկավարժներն ու հոգեբանները հանգել են այն միասնական կարծիքին, որ դաստիարակությունը ընտանիքում արդյունավետ կազմակերպելու լավագույն ուղին գտնվում է այն պայմաններում, որոնք ընտանիքում ստեղծում են ընտանիքի ավագ անդամները (ավագ ծնողներ, հայր, մայր, ավագ որդի, դուստր...): Այդ պայմանների ստեղծումը հիմնականում քիչ կապ ունի ծնողների ունեցած մասնագիտության, զբաղեցրած պաշտոնի, գիտական աստիճանի ու կոչման, նույնիսկ նյութական վիճակի հետ: Տեղեկանալով մանկավարժության մեծերի այդ բնագավառում կատարած հետազոտություններին, դպրոցներում կատարելով երկարամյա դիտումներ դպրոցական պրակտիկայի ընթացքում, ուսումնասիրելով դպրոց-ընտանիք կապերը, մենք հանգեցինք այն եզրակացության, որ ընտանեկան դաստիարակության արդյունավետության պայմաններն այսօր, ինչպես երբեք, կարող են լինել ջերմ և բարեկամական փոխհարաբերությունները ընտանիքում ծնողների, ծնողների ու զավակների՝, զավակների միջև, աշխատանքային առողջ, գործնական և ազնիվ մթնոէորտը ընտանիքում,ծնողների և ընտանիքի մյուս ավագ անդամների անձնական, դրական օրինակը, ծնողների և ընտանիքի մյուս ավագ անդամների բարձր և օբյեկտիվ հեղինակությունը,ծնողների պատասխանատվությունը հասունացող, ձևավորվող ուշ զարգացող զավակների կրթվածության, դաստիարակվածության և ապագա քաղաքացիական կերպարի համար,ծնողների կողմից ընտանեկան կյանքի անթերի կազմակերպումը ամենափոքր գործերից մինչև ամենամեծ հիմնահարցերը,դպրոցի և այլ ոառումնադաստիարակչական հիմնարկների սովորողներին տրվող հանձնարարություն ների և պահանջների հարգումը, ընդունումը և անվերապահ կատարումը ընտանիքի կողմից,ընտանիքի ղեկավարների գիտական, իրավա կան, վարչական, հասարակական, գործավարական և որ ամենագլխավորն է, ծնողական պարտականությունների ներդաշնակ զուգակցումը,ընտանիքում դաստիարակության ընթացքումերեխաների տարիքի, սեռի, հոգեբանական և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, երեխաների նկատմամբ դաստիարակչական պահանջների միասնությունը:Կարծում ենք պատանեկան տարիքի բնավորության, խառնվածքների ճիշտ ախտորոշումը, դրան օժանդակող պայմանների, սկզբունքների, ելակետների, մեթոդների, միջոցների և նրանց հետ դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու ճիշտ,

արդյունավետ և ժամանակի ոգուց բխող ձևերի ընտրությունը հնարավոր կդարձնի նրանց տարիքի («դժվար դաստիարակվող», «ճգնաժամային».) նկատմամբ վստահության ու հավատի վերականգնումը, ինչը և կօգնի դպրոցին և ընտանիքին՝ նրանցից պատրաստելու համակողմանիորեն ու ներդաշնակ զարգացած ապագա քաղաքացիներ։

Պատանիների կյանքի գլխավոր բաղկացուցիչները
1. Մասնագիտության ընտրության հարց
2. Ընկերությունը որպես պատանեկության սոցալիզացիայի տարր
3. Սերը որպես պատանեկան սոցիալիզացիայի տարր

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

«*Ով եմ ես և ուր եմ գնում*». թերևս չկա մեկը, որ այս հարցերն այս կամ այլ ձևակերպմամբ իրեն տված չլինի։ Եվ հետաքրքրականն այն է, որ այո է,որ պատասխանն էլ հաճախ հենց որոշում է, թե ով կդառնա մարդը և ուր կգնա։ Ինչ ասում է նա, այն էլ դառնում է», ահա սա է եգիպտական աստված Պտայի կարծիքը մարդու մասին։ Այնուամենայնիվ կա ուղի, որն ընդհանուր է բոլորի համար, մարդու կամքից անկախ է, տրված է «վերևից»՝ Աստծուց կամ Բնությունից։ Այդ ուղին կենցաղային ճանաչողության մեջ երբեմն համեմատվում է տարվա եղանակների հետ. գարունը մանկությունն է, երբ ցանում են բերքը, ամառը պատանեկությունն է, երբ հասունանում է բերքը, աշունը հասունությունն է բերքահավաքը, իսկ ձմեռը ծերությունն է, երբ աստիճանաբար մեռնում են բնությունը եւ մարդը։ Հնդկական կրոնական համակարգում է նույնպես կյանքի չորս շրջաններ են առանձնացվում, առաջինը ուսման շրջանն է, երկրորդը՝ ամուսնության եւ հասարակական պարտականությունների կատարման, երրորդը՝ ճգնավորության, չորրորդը անտուն աղքատության։ Վերջին երկու շրջանների իմաստը գերմանացի հոգեբան *Գ. Աղլերը* հետևյալ կերպ է բացատրում.
«Այլևս աշխարհիկ բարիքների կուտակումը և այլ հասարակական պարտականությունների կատարումը չի դիտվում որպես տղամարդկային գործ։ Այդ խնդիրները լուծելուց հետո մարդը պետք է ձգտի ստանալ իր ներաշխարհի գանձերը այնքան ժամանակ, մինչև կգա նրա վերջը, և ինչպես անանուն հայտնվել է այս աշխարհում, նույն ձևով էլ պետք է լքի այն»։
Ըստ *Շիհիի* պատանեկության տարիքի խնդիրներն են՝ գտնել սեփական տեղն ու դերը կյանքում, և հասակակիցների միջավայրում, սեռադերային կողմնորոշումը, աշխարհայացքի և արժեքների ձևավորումը։
Է. Էրիքսոնն այս շրջանը բնութագրում է որպես մերձավորության կամ մեկուսացման ճգնաժամ։
Բ. Լիվեհուդը պատանեկան ճգնաժամը վերագրում է 16, 17-21,24 տարքային շրջաններին, որոնց ընթացքում տեղի է ունենում անձնավորության արթնացում։ Այս տարիքում հրատապ են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ <<Ո՞րն է իմ տեղը կյանքում>>, <<Իրականում ինչպիսի՞ն է աշխարհը>>։
Այսինքն աշխարհայացքային փոփոխություններ են տեղի ունենում։
Մյուս հիմնական խնդիրը կենսաբանական և հոգևոր սեռականությունների միջև ներդաշնակության ստեղծումը։
Պատանեկան ճգնաժամի աշտանշանները ներկայացված են հիմնականում ըստ Գոուլդի, Լևինսոնի, Վելյանտի, Շիհիի հետազոտությունների արդյունքների։ Ըստ այդմ՝ պատանեկան ճգնաժամին բնորոշ են աշխարհայացքի, արժեքների, անօգնականության զգացողությունը, ոչ ադեկվատ վարք դրսևորելու տագնապները, զանազան փիլիսոփայական հարցերի պատասխանների որոնումները, իդեալների հաճախակի փոփոխությունը , կյանքի անիմաստության զգացողությունը, թշնամանքը ընտանիքի անդամների նկատմամբ, նմանակման

օբյեկտների փնտրտուքը:
Պատանեկան տարիքում ինքնագիտակցության զարգացումը

Պատանեկության տարիքը հոգեբանական պրոբլեմների նկատմամբ շատ զգայուն է: Որքան մեծ է պատանին (ոչ թե տարիքով, այլ մտավոր զարգացման մակարդակով), այնքան շատ է նրան անհանգստացնում իր շուրջը կատարվող իրադարձությունների ներքին կողմը և ավելի քիչ նշանակություն է ունենում արտաքին կողմը: Պատանին ներգրավվում է հասուն կյանքի մեջ ոչ միայն իր գիտակցությամբ և պատկերացումներով, այլ նաև գործուն մասնակցությամբ, քանի որ նրան հասանելի է այն, ինչն անհնար է դեռահասի համար (ամուսնություն, ծառայելը բանակում, ընտրելու իրավունք): Պատանու անձնավորությանը բնորոշ յուրահատկություն է հանդիսանում ինքնագիտակցության զարգացումը: Այն որոշում է պատանու պահանջների մակարդակը ինչպես շրջապատող մարդկանց, այնպես էլ ինքն իր նկատմամբ:
Պատանեկան տարիքում ինքնագիտակցությունը բարդ համակարգ է, որի մեջ մտնում են՝
. Սեփական անձի նույնականության գիտակցումը.
. Իր սեփական <<ես>>-ի որպես ակտիվ և գործուն ուժի գիտակցումը.
. Սեփական հոգեկան հատկանիշների և որակների գիտակցումը.
. Սոցիալ- բարոյական ինքնագնահատականի որոշակի համակարգ

Այս տարիքում պատանիները դառնում են ավելի քննադատող, մեծ պահանջներ են ներկայացնում մեծահասակի և հասակակիցների բարոյական կերպարին: Քանի որ ինքնագիտակցության համակարգի մեջ մտնող բոլոր տարրերը փոխադարձաբար կապված են , ապա դրանցից մեկի հարստացումը ձևափոխում է ողջ համակարգը: Պատանին նոր ձևով է ընկալում իր ֆիզիկական տեսքը և մարմինը: Նրանցից շատերը տհաճ ապրումներ են ունենում իրենց արտաքին տեսքից և ցանկություն են հայտնում փոխել այն (կարճ հասակ, գիրություն):
Անձի բացառիկ գծերից է ինքնահարգանքը: Հարգանքը սեփական անձի նկատմամբ չի նշանակում իրեն ուրիշներից բարձր կամ ցածր դասել և իր նկատմամբ ունի դրական վերաբերմունք:
Պատանու ինքնագիտակցության բարձր մակարդակն իր հերթին հանգեցնում է ինքնադաստիարակությանը: Ինքնադաստիարակմամբ պատանիները օգնում են մեծերին ձևավորելու իրենց անհրաժեշտ հատկությունները: Հետևաբար ինքնադաստիարակումը նպաստում է դաստիարակչական ներգործությունների ավելի լավ յուրացմանը, դրանց ամրապնդմանն ու զարգացմանը:
.Մարդկային կյանքի ներկայացված երկու շրջաբաժանումները չնայած էապես տարբերվում են միմյանցից, այնուամենայնիվ ունեն մի ընդհանրություն. երկու դեպքում էլ կյանքի փուլը դիտվում է որպես որոշակի իմաստ, դեր, ֆունկցիա ունեցող իրողություն, հանգամանք, որը գիտական տարիքային պարբերացումներում հաճախ հաշվի չի առնվում: Դրանցում տարիքային փուլերը որոշվում են ուղղակի հոգեկան կամ մարմնական հատկությունների ձևավորման, փոփոխման հիման վրա, առանց նկատի ունենալու այդ փոփոխությունների իմաստը, նշանակությունը: Մինչդեռ, այնպես, ինչպես ցանկած գործընթաց, տարիքային փուլը նույնպես ուղղված է ինչ-որ խնդրի լուծմանը, և հենց այդ խնդիրը կամ խնդիրներն են որոշում տարիքային տեղաշարժերի առանձնահատկությունները, տարիքային փուլի էությունը, իմաստ, ֆունկցիան: Այս մոտեցման տեսանկյունից տարիքային փուլը կարելի է որոշել ըստ այն հիմնախնդրի, որը լուծվում է տվյալ տարիքում տեղի ունե- ցող մարմնական, հոգեկան և սոցիալական փոփոխությունների միջոցով: Պարզվում է, որ վերջիններիս վերլուծությունը բավական հստակ պատկերացում է տալիս տվյալ տարիքի հիմքում ընկած հիմնախնդրի (հետևաբար նաև տարիքի ֆունկցիոնալ նշանակության) , դրա ակտուալացման և լուծման, այսինքն տարիքային փուլի տևողության մասին:

Այդ վերլուծությունը մեզ հանգեցրել է զարգացման չորս հիմնախնդիրների և համապատասխանաբար տարիքային չորս փուլերի կամ ավելի ճիշտ ցիկլերի առանձնացմանը: Առաջին հրմնախնդիրն ըստ մեզ տեսակի ձևավորումն է, դրա լուծմանն է ուղղված կյանքի առաջին ցիկլը, որի ընթացքում «քայլ առ քայլ» մարդ էակը ձեռք է բերում իր տեսակային բոլոր հատկանիշները: Սկսենք էմբրոհիոգենեզից. դպրոցական դասագրքերից գիտենք, որ մարդկային սաղմն ընդհանուր գծերով կրկնելով ֆիլոգենեզը՝ կենդանական աշխարհի պատմական զարգացմսւն գործընթացը, ի վերջո ձեռք է բերում տեսակային բոլոր ֆիզիկական հատկությունները: Ակնհայտ է, որ կյանքի այս շրջանի իմաստը տեսակի ձևավորումն է հիմնականում ֆիզիկական առումով: Տեսակի ձևավորման գործընթացը շարունակվում է նաև հետծննդյան շրջանում, աստիճանաբար ձև են բերվում մարդուն բնորոշ հոգեկան, վարքային և սոցիալական հատկությունները: Արդեն առաջին ամսվա վերջում երեխան սկսում է բուռն ձևով հակազդել իր տեսադաշտում հայտնված մարդկանց ժպտում է, ձայներ արձակում, թափահարում ձեռքը, այսինքն սկսում է ճանաչել իր տեսակը և դասել իրեն այդ տեսակի մեջ: Չորրորդ ամսից սկսած երեխայի մեջ ձևավորված տեսակային ամենաէական հատկություններից մեկը՝ խոսքը: Խոսքի շնորհիվ երեխայի մեջ ձևավորվում են տեսակային մյուս կարևոր հատկություններից գիտակցությունը, խոսքային մտածողությունը: 1-1, 5 տարեկանից երեխան, սկսում է տիրապետել մեկ այլ հատկության՝ ուղղահայաց քայլվածքին: 2, տարեկանում ձևավորվում է ինքնագիտակցությունը, այն էապես տարբերվում է մյուս տարիքային փուլերում մարդու ինքնագիտակցությունից: Երեխան գիտակցում է իրեն որպես մարդ, այնպիսին, ինչպիսին ուրիշները (տեսակային ինքնագիտակցություն) , այս դեպքում նա ոչ թե իր եզակիությունն է զգում, ինչպես դեռահասության տարիքում, այլ ընդհանրությունը, այդ պատճառով սկսում է նմանակել այն ամենը, ինչը նրա կարծիքով մարդկային է:

Օրինակ, փոքրիկ տղան կարող է համոզված լինել, որ ինքը հղի է (*Է. Էրիքսոն*, 1994), խաղերում իր վրա վերցնել ցանկացած սոցիալական դեր պատկերացնել իրեն որպես ամուսին կամ կին, նույնացնել իրեն ծնողների կամ մարդկանց հետ, նմանակել նրանց խոսքը, վարքը: Նման հնարավորություն տալիս տեսակային դիֆուզ ինքնագիտակցությունը, որի մեջ դեռևս տարբերակված չեն սեռային կողմը, սոցիալական դերերը: Թերևս, նախամարդու մեջ նույնպես ինքնագիտակցութունը այդպիսին է եղել, ինչպես նշում է Ա. Զոլոտարյովը, շատ ժողովուրդների ինքնանվանումն ուղղակի նշանակում է «մարդ», այսինքն այս առաջնային ինքնագիտակցությունը տեսակային բնույթ է կրել, մարդն ուղղակի իրեն առանձնացրել է որպես տեսակ, ըստ որում սկզբնական շրջանում նա դեռեւս «... զգում էր իր ընդհանրությունը կենդանիների, բույսերի և նույնիսկ՝ անշունչ առարկաների հետ»:

Երեխայի մեջ տեսակային հատկությունների ձևավորման գործընթացը մեր կարծիքով ավարտվում է մոտ 10-12 տարեկանում: 6-7 տարեկանում երեխան յուրացնում է գրավոր խոսքը, (այն, մեր կարծիքով, նույնպես կարող դիտվել որպես ժամանակակից մարդու տեսակային հատկություն), բարոյական նորմերը (*Զ. Ֆրոյդ*): 10-12 տարեկանից ձևավորվում է տեսակային վերջին կարևոր հատկությունը ձևական-տրամաբանական մտածողություն (*Ժ. Պիաժե*), դրանով էլ մեր կարծիքով ավարտվում է կյանքի առաջին փուլը:

Գենետիկական երկրորդ խնդիրը, որ լուծվում է կյանքի հաջորդ փուլում սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորումն է: Այս փուլը սկսում երկրորդային սեռային հատկությունների ձևավորմամբ տղան ֆիզիկապես տղամարդ է դառնում, աղջիկը կին (10, 12-15, 16 տարեկան): Օրգանիզմում ընթացող հզոր տեղաշարժերին զուգահեռ խոր փոփոխություններ են տեղի ունենում նաեւ երեխայի հոգեկան աշխարհում: Իրեն զգացնել է տալիս սեռական պահանջմունքը, յուրահատուկ զգացմունքներ են առաջանում հակառակ սեռի նկատմամբ: Այս ամենի շնորհիվ

փոփոխություններ են տեղի ունենում երեխայի ինքնագիտակցության մեջ, դեռահասը սկսում է իրեն կին, տղամարդ) զգալ, ձևավորվում է սեռային ես–կոնցեպցիան: Այդ նախնական կոնցեպցիան և դրանից բխող ինքնագնահատականն ու վերաբերմունքը սեփական ես-ի նկատմամբ դառնում են այն հիմքը կամ ավելի ճիշտ վարկածը, որով երեխան մտնում է կյանք, փորձարկում իրեն որպես տվյալ սեռը կրող, ինքնահաստատվում որպես կին կամ տղամարդ: Վարկածի ձևավորումը տեղի է ունենում մի շարք գործոնների ազդեցության շնորհիվ, դրանցից ամենակարևորը, թերևս, արտաքին գրավչությունն է (տղաների համար կարեւոր նշանակություն ունի նաեւ ֆիզիկական ուժը եւ ճարպկությունը) . չէ որ վերջինս այդ տարիքի հիմնախնդիրների լուծման ամենաէական միջոցն է: Մեծ դեր են խաղում նաև հակառակ սեռի հասակակիցների կողմից տված գնահատականները և վերաբերմունքը, ինչպես նաեւ նույն սեռի հասակակիցների խմբում գրված սոցիալական դիրքը: Ըստ որում, վերջին երկու հանգամանքները հաճախ փոխադարձ փոխհատուցողական նշանակություն են ձեռք բերում, ասենք արտաքին գրավչություն չունեցող, հակառակ սեռի կողմից ցանկալի վերաբերմունքի չարժանացած տղաները և աղջիկները հաճախ իրենց սեռային ինքնագնահատականը բարձրացնում են նույն սեռի հասակակիցների շրջանում սոցիալական ավելի բարձր դիրքի հասնելու միջոցով, ինչը հաճախ հնարավոր է դարձնում նաև հաղթանակները հակառակ սեռի հետ հարաբերություններում: Ընկերական շրջապատը դեռահասի համար այն միջավայրն է, որտեղ նա ազատորեն փորձարկում, սովորում և սովորեցնում է հասակակիցներին սեռային վարքի եղանակները: Սովորական դիտումներն էլ բավական են պատկերացնելու, թե ինչ դեր է խաղում դեռահասների խումբն իր անդամների «սեռային դաստիարակության» գործում: Օրինակ, տղաների խմբում հաճախ ծայրահեղորեն խրախուսվում են առնական արժեքները՝ուժը, համարձակությունը, ագրեսիվությունը, հավատարմության պահպանումը պատժվում, ծաղրվում է այն ամենը, ինչ «կանացի» է համարվում: Ծայրահեղականությունը, տղամարդ երևալու բուռն ձգտումը հաճախ հասցնում է դեվիանտ վարքի: «Դաժանությունն ու ագրեսիվությունը,-գրում է Ի. Կոնը, - միշտ էլ եղել են դեռահասների եւ պատանիների խմբային վարքի բնորոշ գծերը:... Դա էլ դաժան ներխմբային մրցակցությունն է, իշխանության համար պայքարը, դեռահասների տարբեր խմբերի միջեւ ազդեցությունների ոլորտների համար պայքարը (հաճախ առանց կանոնների) և այս պես կոչված «առանց պատճառի ագրեսիան», որը հաճախ ուղղված է լինում միանգամայն անմեղ, անծանոթ մարդկանց դեմ»: (Շատ դեռահասներ որպես տղամարդկության խորհրդանիշ են ընկալում հանցագործ աշխարհը և հեշտությամբ ընդունում են վերջինիս արժեքներն ու վարքի ձևերը: Խմիչքի ծխախոտի, թմրադեղերի օգտագործումը նույնպես դիտվում է որպես առնական վարքի ատրիբուտներ և արագորեն նմանակվում է:
Մոտավորապես 24-25 տարեկանից սկսած՝ աստիճանաբար տեղի է ունենում անցում տարիքային հաջորդ գերխնդրին, հաջորդ փուլին, որը մենք, հնարավոր է ոչ այնքան հաջող, անվանել ենք սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորման շրջան: Այս փուլը, ըստ մեզ, սկսվում է ծնողական բնազդի (պահանջմունքի) ակտուալացմամբ, որն իր գագաթնակետին է հասնում 28-30 տուսրեկանում:

Գլուխ 2.

ՈՒՍՈՒՑԻՉ - ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մարդը հասարակությունից դուրս կամ աստված է, կամ գազան : Այս միտքը պատկանում է հին աշխարհի իմաստասեր Արիստոտելին: Հիրավի, մարդ ինչպես անձ, չի կարող զարգանալ հասարակությունից դուրս, նրանից անկախ: Հաղորդակցումը կատարում է մի շարք ֆունկցիաներ որոշում է անձի վարքագիծը, ձևավորում է նրա գիտակցությունը և ինքնագիտակցությունը, խթանում է անձի զարգացումը, նրա դրդապատճառներն ու մղումները, կազմակերպում է մարդկանց համատեղ գործունեությունը:

Այդ առումով չապազանց մեծ է մանկավարժական հաղորդակցման դերը դաստիարակության ու ուսուցման գործընթացի կազմակերպման, դպրոցականների անհատականության ձևավորման գործում: Կենդանի, անմիջական հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցյալական, կուլտուրական, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը հասունացող սերնդին, դպրոցականների հոգևոր աշխարհի ձևավորումը: Հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման միջոցով է կատարվում ուսուցչի բազմապիսի դաստիարակչական ներգործություններն իր սաների գիտակցության և վարքի վրա:

Հաղորդակցման վարպետությունը ամենից առաջ ենթադրում է ուսուցչի սևեռուն ուշադրություն, մանկավարժական դիտունակություն : ՈՒշադիր լինելու պակասը, դիտել չկարողանալը մեծ ողբերգություն է թե ուսուցչի, թե նրա սաների համար մանկավարժական հոգեբանության գիտակ *Մ. Մ. Ռուբինշտեյնը* իրավացիոչեն նկատել է, որ եթե մարդու ակտիվ ուշադրությունը դադարում է իր ծառայական պարտքը կատարելուց ,ապա հիշողությունը և ողջ հոգեկան կյանքը կորցնում է իր գիտակցական կարգավորիչ բնույթը ու մարդ իջնում է գրեթե մեխանիկակա խոսք մակարդակին: ՈՒշադրության կենտրոնացումը հոգեկանի գիտակցական կողմի վրակարող է փոխել մարդու վերաբերմունքը իր և ուրիշների ապրումների նկատմամբ Որտեղ չկա ուշադրության ֆունկցիա, կամ այն ընթանում է ծայրահեղ պատահական, ցրված ձևով, այնտեղ չի կարող խոսք լինել նյութի իմաստալից յուրացման մասին: ՈՒսուցչից պահանջվում է ոչ միայն մշտապես ուշադիր լինելու մտավոր սովորույթ այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում դասին կամ արտադասարանային հաղորդակցման ընթացքում, այլև ուշադրությունը միաժամանակ մի քանի տեղ բաշխելու ունակություն: Վարպետ ուսուցիչների դասը վարելու փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք կարողանում են իրենց ուշադրությունը միաժամանակ բաշխել չորս տեղ՝ պատասխանող աշակերտի, դասարանի, ժամանակի և իրենց շարադրելիք դասանյութի վրա: Որոշ ուսուցիչներ մոռանում են աշակերտների հետ շփվելու կարևորոգույն սկզբունքը. պահանջի՞ր, բայց աշակերտի արժանապատվություն մի վիրավորիր : ՈՒսուցիչը միշտ պետք է պահանջկոտությունը զուգակցի արդարամտության ու աշակերտի նկատմամբ բարեկամական ու հարգալից վերաբերմունքի հետ:

Փորձը ցույց է տալիս, որ երեխաները սիրում են պահանջկոտ ուսուցիչներին, բայց միայն այն դեպքում, երբ նրանք հարգալից վերաբերմունք են ցուցաբերում իրենց նկատմամբ, չեն վիրավորում իրենց ինքնասիրությունը և չեն նսեմացում սեփական արժանապատվությունը հասակակիցների ներկայությամբ:

ՈՒսուցչի գնահատականը լուրջ ազդեցություն է գործում դպրոցականի գործունեության վրա : Այդ պատճառով էլ այն հնարավորին չափով ճիշտ պետք է արտացոլի աշակերտի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների իրական մակարդակը:Գիտելիքների ճիշտ գնահատականը սովորողներին օգնում է գիտակցել սեփական նվաճումները : Բայց դպրոցականի

աշխատանքի սխալ գնահատականը բացասական ներգործություն է ունենում հոգեկան վիճակի, ինքնագիտակցության, հուզակամային ոլորտի զարգացման, ուսման ու աշխատանքի համար նրա հոգեբանական նախապատրաստվածության աստիճանի վրա: Աշակերտներին ճիշտ դաստիարակելու համար պետք է լավ ճանաչել նրանց : Ռուս մեծ մանկավարժ *Կ. Դ. ՈՒշինսկին* Մարդը որպես դաստիարակության առարկա աշխատության առաջաբանում գրել է. Եթե մանկավարժությունը ուզում է մարդուն դաստիարակել համակողմանիորեն, ապա նա պետք է մարդուն ճանաչի նույնպես համակողմանի:

Ա. Ս. Մակարենկոն, լինելով անձի դաստիարակությունը կոլեկտիվում և կոլեկտիվի միջոցով դաստիարակելու կողմնակիցը, միաժամանակ նշել է սաների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը: Դաստիարակության նպատակը¦ հոդվածում նա գրել է. Որքան էլ մարդը ընդհանուր առմամբ մեզ կատարյալ է ներկայանում, այնուամենայնիվ մարդիկ շատ բազմազան նյութ են դաստիարակության համար: Դասարանի ղեկավարը սովորաբար դնում է իրագործում է իր դասարանի բոլոր աշակերտներին վերաբերող միասնական դաստիարակչական խնդիրներ : Օրինակ, նա ձգտում է իր բոլոր աշակերտներին վարժեցնել աշխատասիրության, կազմակերպվածության, ճշմարտասիրության: Բայց այդ խնդիրների լուծման ուղիները, միջոցները և մեթոդները կարող են լինել բազմազան, նայած աշակերտների անհատական առանձնահատկություններին: Նրանցից ոմանց հարկավոր է ժամանակին խրախուսել, մյուսներին՝ կարգադրել, երրորդներին՝ հմտորեն պատժել վարքի կանոնները խախտելու համար Հետևապես, դպրոցականներին ճիշտ դաստիարակելու համար, պետք է դաստիարակության ընթացքում նրանց նկատմամբ ապահովել անհատական մոտեցում : Իսկ դրա համար հարկավոր է խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրել նրա Աշակերտներին չճանաչելով աշխատել, նշանակում է աշխատել կուրորեն՝ առանց հաջողության հույս ունենալու :Իսկ աշակերտին չճանաչելով՝ ուսուցիչը կարող է լուրջ սխալներ թույլ տալ նրանց նկատմամբ իր մոտեցման ու մանկավարժական ներգործման մեթոդների ընտրության հարցում : Անհատական առանձնահատկությունների հաշվառումը անհրաժեշտ է միշտ և ամենուրեք Եթե ուսուցիչն անց է կացնում զրույց կամ կազմակերպում է էքսկուրսիա թանգարան կամ հանձնարարում է կարդալ նոր գիրք,նա միշտ պետք է հաշվի առնի աշակերտների հետաքրքրությունները և հակումները, նրանց զարգացման մակարդակը:

Աշակերտներին ուսումնասիրելու պրոցեսում նյութ է հավաքվում նաև յուրաքանչյուր աշակերտի զարգացվածության մակարդակի վերաբերյալ: Մասնավորապես կարևոր է գտնել այսպիսի հարցերի պատասխաններ. դպրոցականի ընդհանուր զարգացվածությունը, վերաբերմունքը ուսումնական աշխատանքին և աշակերտի առաջադիմությունը, աշակերտի կարգապահության մակարդակը, հետաքրքրությունների լայնությունն ու կայունությունը: Որոնք են աշակերտներին ուսումնասիրելու մեթոդներն ու եղանակները:

1. ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼԸ:

Աշակերտների, նրանց առողջական վիճակի, առաջադիմության և դաստիարակվածության վերաբերյալ նախնական տեղեկություններ կարելի է գտնել նրանց անհատական գործերում :

2. ԴԻՏՄԱՆ ՄԵԹՈԴ:

Սա աշակերտին ուսումնասիրելու հիմնական մեթոդն է Դիտումները պետք է ուղղված լինեն դպրոցականներ կյանքի ու գործունեության սովորական պայմաններում նրանց սիստեմատիկ ուսումնասիրությանը: Դա կատարվում է դասերի ժամանակ և դասերից հետո: Իհարկե, դա չի նշանակում, թե դասվարը պետք է միշտ և ամենուրեք կրնկակոխ հետևի աշակերտներին և հսկի նրանց վարքը:Դա կարող է առաջացնել աշակերտների օրինական դժգոհությունը և

այդ խրատական հսկողությունից ազատվելու ցանկություն:Աշակերտները չպետք է նկատեն, որ իրենց ամեն օր հետևում են: Միշտ շփվելով աշակերտների հետ՝ դիտողականությամբ օժտված դաստիարակը կարող է ի հայտ բերել իրեն հետաքրքրող շատ բաներ:
Որքան լավ ու նպատակաուղղված են կազմակերպված դիտումները, այնքան խորն ու բազմակողմանի կարելի է ուսումնասիրել աշակերտներին : Իրենց բնավորությունները, ունակությունները և ձիրքերն ավելի լրիվ չափով աշակերտները նացահայտում են դասերի ժամանակ: Հետևապես հարկավոր է ավելի ուշադիր լսել աշակերտների պատասխանները դասերի ժամանակ, անալիզի ենթարկել այդ պատասխանները, բացահայտել աշակերտների հիշողության և մտածողության առանձնահատկությունները, այնպիսի հատկությունների առկայությունը նրանց մեջ, ինչպիսիք են՝ ջանասիրությունը, կարգապահությունը, համառությունը ուսումնական աշխատանքում:
Դրա հետ մեկտեղ պետք է աշակերտներին հետևել նաև կյանքի ուրիշ դեպքերում՝ դասամիջոցների, խաղերի, զբոսանքների, էքսկուրսիաների, խմբակային պարապմունքների ընթացքում : 3.
ԳԻՏԱՓՈՐՁԻ ՄԵԹՈԴ
Ստուգելու համար, թե դպրոցականներն ինչպես են իրենց պահում փոփոխվող իրադրության մեջ, ուսուցիչը կարող է օգտագործել աշակերտներին ուսումնասիրելու այնպիսի մեթոդ, ինչպիսին է բնական փորձադրումը : Ի տարբերություն սովորական մանկավարժական դիտումների՝ ուսուցիչը առանձին աշակերտների կամ աշակերտների որոշ խմբերի ուսումնասիրում է հատուկ կազմակերպված պայմաններում : Այդ մեթոդի օգնությամբ կարելի է ստուգել, ճշտել աշակերտների վերաբերյալ սկզբնական տվյալները, պարզել, թե ինչպես են իրենց պահում նոր, փոփոխված բնական իրավիճակներում : Այդ իրավիճակները կամ առանձնակի պայմանները, հատուկ ստեղծվել են մանկավարժների կողմից:
4. ԶՐՈՒՅՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ
Աշակերտներին ուսումնասիրելու ընթացքում զգալի տեղ են գրավում զրույցերը դպրոցականների հետ: Դրանք օգնում են աշակերտների վարքի շարժառիթները, նրանց հետաքրքրություններն ու հակումները ի հայտ բերելու գործին : Հմտորեն անց- կացված զրույցները թույլ են տալիս թափանցել աշակերտի հոգու գաղտնարանները, որոնք դիտարկումների ժամանակ երբեմն թաքնված են լինում : Աշակերտին նրբազգացությամբ և ուշադիր մոտենալու դեպքում, նա հաճույքով կպատմի իր նվիրական ցանկությունների ու փա- փագների մասին : Լավ է, եթե զրույցները կրում են ոչ պաշտոնական բնույթ, եթե դրանք բնական են, անկեղծ և անց ենկացվում մանկավարժական տակտը պահպանելով : Զգալով իր նկատմամբ անկեղծ ուշադրություն, բարյացակամություն և համակրանք, աշակերտը, սովորաբար, բաց սրտով պատմում է ուսուցչին այն մասին, ինչ հետաքրքրում է նրան: Տակտով, ջերմ և սրտաբաց զրույցը ոչ միայն աշակերտին ուսումնասիրելու մեթոդ է, այլ նաև նրանց դաստիարակության ձև: Զրույցի նախապատրասվելիս առանձնապես կարևոր է խորհել դրա նպատակի, այն մտավոր հարցերի շուրջ, որոնք պետք է տրվեն աշակերտներին, նշել զրույցի անցկացման ժամանակը և տեղը:
5 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Աշակերտների հետաքրքրություններն ու հակումներն ուսումնասիրելու և նրանց ձգտումներն ու իդեալները հայտնաբերելու նպատակով անց են կացվում տնային շարադրություններ Աշակերտներին վաղորոք հայտարարվում է շարադրության թեման և խորհուրդներ են տրվում նրա կատարման կարգի մասին : Շարադրությունների անալիզը հնարավորություն է տալիս լավ իմանալ աշակերտների հետաքրքրությունները և հակումները: Սովորական դպրոցական

կյանքում որոշ աշակերտներ լինում են աննկատելի, աչքի չընկնող, իսկ իրենց շարադրություններում հաճախ նրանք դրսևորում են հոգեկան հարստություն և դիտողականություն: Շարադրություններում արտացոլվում է աշակերտների զարգացվածության, կարգապահության ընդհանուր մակարդակը, տեղի ունեցող իրադարձություններն ինքնուրույն հասկանալուունակությունը: Շարադրությունները պատկերացում են տալիս նաև աշակերտների բարոյական հատկությունների, նրանց իդեալների և ձգտումների մասին: Ճիշտ չէր լինի, իհարկե, միմիայն շարադրությունների հիման վրա գնահատել այս կամ այն աշակերտի անձը: Աշակերտին ուսումնասիրելու ընթացքում անհրաժեշտ է հետևել, թե նրանք իրականում ինչպես են դրսևորում իրենց բարոյական հատկությունները, բնավորության գծերը: Շարադրության օգնությամբ ձեռք բերված նյութերը պետք է համեմատել ուրիշ ճանապարհով ձեռք բերված նյութերի հետ:Միայն այս պայմանով է հնարավոր ճիշտ գնահատել աշակերտների դաստիարակվածության մակարդակը, ի հայտ բերել նրանց անհատական հատկությունները և առանձնահատկությունները:

6. ԶՐՈՒՅՑՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ՈՒսուցիչների հետ ունեցած զրույցներում սովորաբար պարզաբանվում են աշակերտների առաջադիմության ու վարքի հարցերը, նրանց վերաբերմունքը ուսումնական աշխատանքի նկատմամբ: Այդ ժամանակ երբեմն պարզվում է, որ ուսուցիչներից ոմանց դասերին որոշ աշակերտներ իրենց պահում են լավ, օրինակելի, իսկ ուրիշների դասերին խանգարում են կարգապահությունը, անփույթ վերաբերմունք են ցույց տալիս տնային առաջադրանքների կատարմանը:Այդ դեպքում կարևոր է ուսուցիչների հետ պայմանավորվել այդպիսի աշակերտների վրա ներգործելու միասնություն ապահովելու, ուսման նկատմամբ նրանց մեջ հետաքրքրություն զքարգացնելու և խթանելու մասին:

7. ԶՐՈՒՅՑՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցականների՝ նրանց առանձնահատկությունների և բնավորության վերաբերյալ լրացուցիչ նյութ կարելի է նաև աշակերտների ծնողներից: Դպրովականի տուն այցելելու և ծնողներին դպրոց կանչելու դեպքում դասվարը նրանց հետ զրուցում է այն մասին, թե իրեն ինչպես է պահում այս կամ այն աշակերտը ընտանիքում, ինչպես է վերաբերվում ավագներին և ընկերներին, ինչ է նա կարդում, ինչ գրքեր կան նաև գրադարանում: Նա պարզում է նաև, թե դպրոցականը ինքնասպասարկման աշխատանքներ կատարում է, թե ոչ: Զրույցների սկզբում ծնողներին պետք է պատմել դպրոցում աշակերտի ուսումնական աշխատանքի ու վարքի մասին : Այս դեպքում կարևոր է ամենից առաջ նշել լավը, արժեքավորը: Դրանից հետո կարելի է պատմել նրա թերությունների մասին և անցնել հետաքրքրող հարցերը պարզելուն: ԾՆողների հետ անցկացված զրույցներից երբեմն կարելի է իմանալ, որ որոշ աշակերտներ իրենց տարբեր ձևով են պահում դպրոցում և տանը: Դպրոցում նրանք կարգապահ են, հարգալից, իսկ տանը թույլ են տալիս անկազմակերպվածություն, չեն լսում կամ ընդհակառակը: Նման դեպքում կարևոր է ծնողների հետ պայմանավորվել երեխաների նկատմամբ միասնական պահանջների, նրանց վրա համատեղ կերպով ներգործելու վերաբերյալ:

Գլուխ **3.**

Մարտավարության հիմունքներ

Մարտի բնութագիրը, տեսակները և հիմնական սկզբունքները

Մարտը պատերազմող կողմերի ստորաբաժանումների. զորամասերի կազմակերպված զինված ընդհարումն է: Այն հաղթանակին հասնելու միակ միջոցն է և մղվում է հակառակորդին ոչնչացնելու կամ գերելու, ինչպես նաև ռազմական կարևոր օբյեկտները գրավելու և պահելու նպատակով:

Ժամանակակից մարտը համազորային է որին մասնակցում են բոլոր զորատեսակներին ստորաբաժանոիմները:

Մարտում հակառակորդի ջաղջախումն ու հաղթանակը ձեռք է բերվում զենքի բելեր տեսակների հուժկու հարվածներով:

Ժամանակակից մարտը բնութագրվում է վճռականությամնբ, լարվածությամբ, սրընթացությամբ և շարժունակությամբ:

Ժամանակակաց համազորային մարտի սկզբունքները մարտն ամբողջությամբ կազմակերպելու և վարելու ուղղեցույց դրույթներ են ու կարևորագույն հանձնարարկաններ որոնք դիտարկվում են միասին, համատեղ: Մարտում հաջողության հասնելու համար պետք է հմնտորեն կիրառել բոլոր սկզբունքները:

Ժամանակակաց համազորային մարտի սկզբունքները.

- ստորաբաժանումների մշտական բարջր մարտական պատրաստականու-թյունը,
- մարտ վարելու մեծ ակտվությունը վճռականությունը,
- գործողությունների հանկարծակիությունը,
- մարտում անընդմեջ փողգրծակցության պահպանումը,
- անհրաժեշտ ժամին հիմնական ուժերին կենտրոնացումը գլխավոր ուղղության վրա,
- ուժերի և միջոցների զորաշարժը խուսանավումը,
- մարտի բազմակողմանի ապահովումը,
- մարտունակության պահպանումը ու ժամանակային այն վերականգնելը,
- մարտի կայուն անընդմեջ կառավարումն:

Զինվորի պարտականությունները մարտի դաշտում

Զինվորը պարտավոր է .

- իմնալա դասակի, ջոկի և իր մարտական առաջադրանքը,

- ուսումնասիրել զենքի մարտական հնարավորությունները, իմանալ մարտական մեքենաների մարտավարական տեխնիկական բնութագիրը դրանց խոցելի տեղերը,
- մարտի բոլոր տեսակներում կատարել դիտարկում,
- իմանալ ամրաշինական կառույցների սարքավորման հաջորդականությունը, կարողանալ ըստ ժամկետների սարքավորել խրամատները և թաքստոցները,
- հմնտորեն օգտագործել տեղանքը և տեղական առարկաները,
- հյտնաբերել նշել և զեկուցել հրամանատարին ականների և պայթուցիկ նյութերի մասին,
- մարտի ընթացքում ցուցաբերել քաջություն նախաձռնություն վճռականություն և հնարամտություն,
- իմանալ հակառակորտի թռչող օբյեկտների տարբերանաշանները և կարողնալ հրաձգային զենքից կրակ բացել ցածրաթռիչ այդ նշակետերի վրա,
- մարտի ընթացքում պաշտպանել հրամանատարին նրա վիրավորվելու կամ զոհվելու դեպքում համարձագորեն ստանձնել ստորաբաժանման հրամանատարությունը,
- առանց հրամանատարի թույտվության չլքել իր տեղը մարտի դաշտում,
- կարողանալ արագ և ճարպկորեն լիցքավորել զենքը:

Զինվորի տեղաշարժը մարտում

Ժամանակակց մարտում զինվորը գործում է հետնյոտն կամ մարտական տեխնիկայով: Պատահական և անվճռական տեղաշարժը բերում է մեծ կորուստների և առաջադրված խնդրի խափանման: Զինվորը դիրքից դիրք տեղաշարժվելի հրաձգային զենքի դիպուկ կրակից խուսափելու նպատակով երեքից հինգ վարկյանից ավելի չպետք է բաց լինի հակառակորդի համար: Ընդ որում նա երբեք ուղղաձրք դիրքով և ուղղիղ գծով չպետք է շարժվի իր թաքստոցից:

Հետիոտն գործողությունների ժամանակ կախված տեղանքի բնույթից և հակառակորդի կրակի ազդեցությունից զինվորը կարող է տեղաշարժվել արագ քայլով կամ վազքով, վազեվազքով և սողանցելով:

Զինվորը պաշտպանությունում

Պաշտպանությունը մարտի տեսակ է որի նպատակն է խափանել կամ հետ մղել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը նրան պատճառել զգալի կորուստ պահել կարևոր շրջանները և դրանով նպաստավոր պայմաններ ապահովել վճռական հարձակման անցնելու համար: Պաշտպանությունը կարող է իրականացվել հարկադրական կամ կանխամտածված երբ հարձակումը անհնար է կամ աննպատակ:

Զինվորը պաշտպանությունում գործում է ջոկի կազմում հմտորեն օգտագործելով իր զենքը ինժիներային սարքավորումները տեղանքի պայմանները նա կարող է զգալի կորուստ պատճառել մի քանի անգամ գերազանցող հակառակորդին: Ստանալով ջոկի հրամանատարի մարտական առաջադրանքը զինվորը պարզում է.

- կողմնորոշիչները
- հակառակորդի կազմը, դիրքը և գործողությունների բնույթը

- դասակի, ջոկի և իր խնդիրը
- հարևանների խնդիրները
- ազդարարման, կառավարման, փոխ գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը
- պաշտպանությանը պատրաստ լինելու կարգը

Առաջադրանքը ստանալուց հետո զինվորը ձեռնամուխ է լինում տեսադաշտի և գնդակոծման գոտու մաքրմանը, ինչպես նաև խրամատի սարքաորմանը։

Խրամատները զինվորի համար լինում են պարկած, ծնկած և կանգնած դիրքերի համար։ Պարկած խրամատ քանդելու համար զինվորը քանդում է 30 սմ խորությամբ 170 սմ երկարությամբ խրամատ։ Քանդած հողը տեղավորում է խրամատին առջևի և կողմերի մասում, զենքը լինում է մեկ փևի բացվածքով հեռը դրված։

Ծնկած դիրքից կրակելու համար խրամատը քանդվում է 60 սմ խորությամբ։ Կանգնած կրակելու համար խրամատը փորում է 110 սմ խորությամբ։ Խրամատը շատ լավ պաշտպանիչ ինժինեռական կառույց է։ Զինվորը հակառակորդի վրա կրակ է բացում երբ վերջինս մոտենում է ջոկի ներգործուն կրակի հեռավորությանը։ Կրակն ավելի արդյունավետ է դառնում երբ հակառակորդը սկսում է հաղթահարել արգելազփակոցները։ Տանկերի գրառհը հետ մղելիս պետք է հետևակը կտրել տանկերից և ոչնչացնել։ Զրահամեքենաների դիտանքցներ վրա կարելի է կրակ բացել 200 մետրից։ ՖԴիրքին անմիջական մոտենալուն 25-30 մետր տանկի վրա պետք է նետել ձեռքի հակատանկային նռնակը։ Եթե տանկը չի խոցվում զինվորը խրամատում վազում է մի կողմ պառկում խրամատի հատակին և երբ տանկը հաղթահարում է խրամատը զինվորը արագ ելնում է տեղից և հակատանկային նռն ակ նռտեւմ նրա վրա։ Երբ հակառակորդը գտնվում է դիրքից 30-40 մետր հեռավորության վրա հրամանատարի հրամանով զինվորը նրա վրա նետում է նռնակներ։ Պաշտպանությունում մեծ նշանակություն ունի առավել կարևոր նշակետրն ինքնուրյուն ընտրելու և դրանց վրա կործանիչ կրակ բացելու ունակությունն։

Զինվորը հարձակման ժամանակ

Հարաձակում մարտի հիմնական տեսակն է այն վճռական նշանակություն ունի հակառակորդի նկատմամբ հաղթանակին հասնելու համար։ Միայն վճռական հարձակումով կարելի է հասնել հակառակորդի լրիվ ջախջախումը։ Հարձակումից առաջ, սովորաբար անցկացվում է կրակային նախապատրաստություն։ Հարձակման վճռական պահը գրոհն է հարձակվող հակառակորդի վրա հարձակումը կոչվում է համդիպական մարտ նհանջոց հակառակորդի վրա հարձակումը կատարվում է հետապնդումով։

Հարձակվելիս զինվորը գործում է ջոկի կազմում։ Ստանալով առաջադրանքը զինվորը պարզում է.

- կողմնորոշիչները
- հակառակորդի կազմը
- դասակի, ջոկի և իր խնդիրը, իր տեղը շխթայում
- ոչնչացման ենթակա նշակետերը և կրակ վարելու կարգը
- այն տանկի համարը և տարբերանշանը որին հետևելու է ջոկը։
- ՀՄՄ (ԶՓ)-ից իջնելու տեղը արգելքներ հաղթահարելու կարգը
- հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը

Հետիոտն հարձակվելիս ստուգում է զենքը զինամթերքը խրամատից արագ

դուրս գակլու համար պատրաստում է աստինաջաձև հարմարանք: Տանկը ելման դիրքին մոտենալուն պես ջոկի հրամանատարի հրամանով (ջոկ պատրաստվիր գրոհի), զինվորը լիցքավորում է զենքը նախապատրաստում է նռնակները, ավտոմատին միացնում սվին դանակը, նշանառությունը դնում <<Π>> կամ <<3>>ի վրա և զբաղեցնում է իր տեղը շխթայում: Տանկի կամ ՀՄՄ-ի հետևից շարժվում առաջ: Հետյոտն գրոհելու համար երբ ՀՄՄ դուրս է գալիս սահմանված բնագիծ զինվորը արագ դուրս է գալիս մեքենայից և գրավում իր տեղը ջոկի մարտակարգում: Ականապատ դաշտերը անցնելու ժամանակ զինվորները պետք է շարժվեն տանկի թրթուրների հետքերով: Գիշերեով հարձակվելիս բաց սովորական հարձերից նշվում են.

- խավար ժամանակ երևացող կողմնորիշիչները
- հարձակման ուղղությունները
- տանկի, ՀՄՄ-ի անցման տեղը և տարբերիչ նշանները
- ականադաշտում, արգելափակոցում անցումի տեղը
- տեղանքի լուսարցակման կարգը

Գիշերային հարձակմանը նախապատրաստվում են ցերեկային ժամերին: Պահեստատուփերը լրացվումն են լուսածրող գնդակներով: Գրոհի ժամանակ թեկուղ մեկ զինվորի առաջխաղացմանը պետք է աջակցեն մյուս զինվորները:

Զինվորը որպես դիտորդ

Դիտարկումը համարվում է հետախուզության հիմնական եղանակներից մեկը, որն ապահովում է առավել հուսալի տեղեկություններ հակառակորդի և տեղանքի մասին: Այն կազմակերպվում է մարտական գործողությունների բոլոր տեսակներում և կատարվում է անընդմեջ:

Դիտորդը պարտավոր է՝

- ճիշտ ընտրել, սարքավորել և քողարկել դիտակետը, կողմնորոշվել տեղանքում, կարողանալ որոշել օբյեկտների հեռավորությունը, օգտվել դիտասարքերից և կապի միջոցներից:
- Գիտենալ հակառակորդի մարտական տեխնիկայի և զենքի տեսակների հետախուզական հատկանիշները:
- Կարողանալ վերլուծել տեղեկությունները կատարել գրանցում դիտամատյանում և հստակ զեկուցել հրամանատարին դիտարկման արդյունքների մասին:

Դիտակետը, սովորաբար, ընտրվում է հրամանատարին մոտ, որ հնարավոր լինի նրան

զեկուցել զննման արդյունքների մասին: Դիտակետն ընտրելիս հարկավոր է հիշել, որ

դիտորդն ամեն ինչ պետք է տեսնի, լսի և ինքը մնա աննկատ: Գախնալսումը կատարվում է

հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում:

Բնակավայրերի զննումը սկսվու է հեռվից, ծայրամասից:

Անտառի զննումը կատարվում է անտառեզրից: Նախ բարձրադիր վայրից դիտարկում են բացատները:

Գետի զննումը սկսվում է գետեզրից: Ուշադրություն է դարձվում ինչպես ելման այնպես էլ դիմացի ափերի մերձակա թփուտների, խորխորատների:

Բարձունքի զննումը կատարվում է շարժվելով նար լանջերով կամ կողքից այն շրջանցելով:

Դիտարկումը հարկավոր է կատարել որոշակի հաջորդականությամբ: Եթե դիտորդը տեղանքը դիտում է ոչ պլանավորված, հայացքը տեղափոխելով մի տեղից մյուսը ապա նա չի կարողանա հայտնաբերել հակառակորդին: Ճշգրիդ դիտարկման համար նշված հատվածը բաժանվում է գոտիների. մոտակա, միջին, հեռավոր: Մոտակա գոտին ընդգրկում է միջև 400 մ խորություն: Միջին գոտին ընդգրկում է 400-800 մ տեռսանելիության սահմանում իսկ հեռավորը տեղանքի ամբողջ հատվածն է միջև օպտիկական սարքեի տեսանելիության սահմանում:

Դիտարկման տվյալների զեկուցման կարգը

Տեղանքում հայտնաբերելով նշանակետերը և իր տեղից որոշելով նրա դիրքը ու հեռավորությունը դիտորդը չդադարեցնելով դիտարկումը զեկուցում է հրամանատարին որից հետո նշում է քարտեզի վրա և գրանցում դիտամատյանում: Դիտարկման արդյունքների զեկուցումը պետք է լինի հակիրճ ու պարզ, ոչ բարձր բայց լսելի ձայնով: Եթե չկան կողմնորոշիչներ դիտորդը նշում է նշակետերի մագնիսական ազիմուտը և հեռավորությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Անձի հասունությունը, որն իր մեջ ներառում է անձնային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են ադեկվատ ինքնագնահատումը, ինքնագիտակցումը, կողմնորոշումը հետաքրքրություններում և արժեհամակարգում, նպաստում է կյանքի ընթացքում տարբեր իրավիճակների հարմարմանը, խթանելով ինքնադրսևորմանը և ինքնիրացմանը:

Նոր միջավայրում, անձի հասունությունը, որպես պահանջմունքների, դրդապատճառների, հետաքրքրությունների, արժեքների, հույզերի և համոզմունքների հիման վրա ձևավորվող հարաբերությունների համակարգ, նպաստում է անձնային առանձնահատկությունների վերափոխմանը:
Երիտասարդական տարիքը բնորոշվում է անձնային այնպիսի գործոններով, ինչպիսիք են վարքի հսկողությունը, բարեխղճությունը, ադեկվատ վերաբերմունքը և շփվողականությունը: Նոր միջավայրում բնորոշ են նաև ինքնուրույնության պակասը և բարձր լարվածությունը: ինքնուրույնությունը չունի վառ դրսևրում և ավելի առկա է թույլ մոտիվացիան, առանց լարվածության:
Երիտասարդների մոտ միջավայրը թելադրում է նոր պատկերացումների ձևավորում, որն օգնում է տվյալ հասարակության մեջ սեփական կարգավիճակի ձեռքբերմանն ու հարմարմանը:
Ինչպես տեղաբնակ, այնպես էլ ոչ տեղաբնակ երիտասարդների մոտ իմացության պահանջմունքի բավարարումը և կողմնորոշումը փոխպայմանավորված է հուզական կայունության ցուցանիշով: Սակայն ոչ տեղաբնակների մոտ այն ուղեկցվում է նրբազգացության, բարեխղճության և պատասխանատվության ցուցանիշների դրսևորմամբ, իսկ տեղաբնակների մոտ կրեատիվության և հաղորդակցման ցուցանիշներով

Մանկավարժական հաղորդակցումը նույնքան կարևոր է, որքան առարկայական գիտելիքները: Կարելի է ասել, սրանք լավ մանկավարժի համար միմյանց հետ փոխադրձ կապի մեջ գտնվող կարևորագույն պայմաններն են: Քանի որ, եթե ուսուցիչը լավ է տիրապետում իր ավանդելիք առարկային, սակայն չունի մանկավարժական հաղորդակցման կարողություններ,

դա կհանգեցնի դասի տապալման և ընդհակառակը՝ եթե ունի մանկավարժական հաղորդակցման հմտություններ, բայց լավ չի տիրապետում առարկային, սա արդեն կհանգեցնի ուսուցչի հեղինակության անկման, որը ևս բացասաբար կանդրադառնա դասի արդյունավետության վրա:
Ընկերները դառնում են անձի սոցալիզացիայի, հասարակության ճանաչման , մարդկանց փոխհարաբերությունների անհրաժեշտ մասնիկ: Այսպիսով պատանեկության տարիքի հիմնական նորագոյացություններն են աշխարհայացքի, ինքնուրույն դատողությունների ձևավորումը, բարձրացված պահանջները մարդու բարոյական կերպարի նկատմամբ, ադեկվատ ինքնագնահատականի ձևավորումը, ինքնադաստիարակության ձգտումը: Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել պատանու հուզազգացմունքային ոլորտին, հասկանալ նրա ապրումները, պարուրել նրան սիրով ու ջերմությամբ: Վերջիններիս պակասը կարող է հանգեցնել այն բանին, որ պատանին հոգեպես օտարանա միջավայրից, իրեն զգա միայնակ ու անօգնական, մտածի, որ ոչ ոք պատրաստ չէ լսելու և հասկանալու իրեն: Պատանուն ոչ մի դեպքում չի կարելի մենակ թողնել, քանի որ մեկուսացվածությունը շրջապատող միջավայրից կարող է սուիցիդալ մտքերի առաջացման հիմք հանդիսանալ: Ինչպես մենք նկատեցինք, ընդհանուր էմոցիոնալ ուղղվածության բոլոր տիպերի համար կարևոր է բուռն զգացմունքային կյանքով ապրելու ձգտումը, տարբեր են միայն այդ զգացմունքային կյանքի դրսևորումները: Շատ կարևոր է, որպեսզի այս շրջանում չշեղվի անձը և չբռնի կործանիչ ճանապարհները: Ուստի անհրաժեշտ է ապահովել զգացմունքային կապը հասակակիցների, մտերիմների և հարազատների հետ:

Ամենաընդհանուր ձևով կարելի է նշել մանկավարժական հաղորդակցման ձևավորման հետևյալ ուղիները՝
1. ՈՒսուցչի անձնավորության գաղափարա-քաղաքական մակարդակի բարձրացումը, բարոյական գծերի դաստիարակումը մանկավարժական հաղորդակցման ձևավորման անհրաժեշտ պայմաններն են : ՈՒսուցիչն իր մանկավարժական մեծ կոլեկտիվի շրջապատում մոռանում է անձնական անախորժություններն ու դառնությունները:
2. Իր որակը բարձրացնելու, գրտելիքներն ու մեթոդական հմտությունը ընդլայնելու ուղղությամբ ուսուցչի սիստեմատիկ աշխատանքը ձևավորում է մանկավարժական հաղորդակցման կարողություններ:
ՈՒսուցիչը չի կարող տեղում կանգնել, պետք է ետ չմնա գիտության զարգացումից, գիտակ լինի իր մասնագիտության բնագավառում եղած վերջին նվաճումներին : Աշակերտները հարցասեր են, շատ բան գիտեն ինֆորմացիայի տարբեր աղբյուրներից, ուսուցիչը պետք է գնա նրանց առջևից, որպեսզի բավարարի երեխաների հետաքրքրությունները : Առանց դրա չի կարող խոսք լինել մանկավարժական հաղորդակցման որևէ դրսևորման, հեղինակության որևէ նվաճման մասին :
3. Մանկավարժական հաղորդակցման կարողություններ մշակելու համար մեծ է մանկավարժական պրակտիկայի դերը՝ ուսուցիչների մեջ մեկը մյուսի փորձի, երեխաների նկատմամբ վերաբերմունքի լավ օրինակների ու հմտությունների ընդօրինակումը և այլն: Մանկավարժական պրակտիկան ունի մի շարք առավելություններ:

4. Որոշ ուսուցիչների խոսքի կուլտուրան բավականաչափ բարձր չէ: Նրանք բանավոր խոսքում թույլ են տալիս սխալ համաձայնություն և շեշտադրություն, անհաջող են կառուցում նախադասությունը: Այդ իսկ պատճառով ամբողջ մանկավարժական կոլեկտիվի ջանքերով դպրոցում պետք է պայքար մղել խոսքի մաքրության և կուլտուրայի համար:
5. Աշակերտների հետ ունեցած փոխհարաբերություններում ուժեղ կամքը, հաստատակամությունը, մանկավարժական սկզբունքայնությունը, համբերությունը և ինքնատիրապետումը ուսուցչին հնարավորություն են տալիս պահպանել մանկավարժական հաղորդակցման պահանջները և հաջողության հասնել ուսումնադաստիարակչական աշխատանքում:

1. Զինված ուժեր զորակոչվոլով ընկերները դառնում են անձի սոցալիզացիայի, հասարակության ճանաչման , մարդկանց փոխհարաբերությունների անհրաժեշտ մասնիկ: Այսպիսով

պատանեկության տարիքի հիմնական նորագոյացություններն են աշխարհայացքի, ինքնուրույն դատողությունների ձևավորումը, բարձրացված պահանջները մարդու բարոյական կերպարի նկատմամբ, ադեկվատ ինքնագնահատականի ձևավորումը, ինքնադաստիարակության ձգտումը: Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել պատանու հուզազգացմունքային ոլորտին, հասկանալ նրա ապրումները, պարուրել նրան սիրով ու ջերմությամբ: Վերջիններիս պակասը կարող է հանգեցնել այն բանին, որ պատանին հոգեպես օտարանա միջավայրից, իրեն զգա միայնակ ու անօգնական, մտածի, որ ոչ ոք պատրաստ չէ լսելու և հասկանալու իրեն: Պատանուն ոչ մի դեպքում չի կարելի մենակ թողնել, քանի որ մեկուսացվածությունը շրջապատող միջավայրից կարող է սուիցիդալ մտքերի առաջացման հիմք հանդիսանալ:

2. Ելնելով ժամանակակիվց տեխնոլոգիաների օգտագործումից մարտավարության հիմնահարձերը պետք է փոխվեն նորագույն տեխնոլոգիաների օգտագործման պատճառով առաջացել են նորագույն զենքեր, թրչող անոթաչու սարքեր որոնց դեմ պայքարելու համար հարկավոր է մշակել նոր մարտավարություն ունենալ նորագույն զենքեր և լուծումներ, ինչպես նաև նորագույն զենքերի մասնագետներ: Հարկավոր են նորագույն տեխնոլոգյաներին տրապետող սպաներ և զինվորներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Ս.Մակարենկո - Մանկավարժական ընտիր երկեր: - Երևան 1950:
2. Ա.Ա.Բալյան - Դաստիարակության հոգեբանական հիմունքներ, Եր. 1974:.
3. Ա. Ա Բալյան - Մանկավարժական վարպետության հիմունքներ; - Երևան 1988:
4. Հ. Մ. Թութունջյան –Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները,Երևան, Հայպետմանկուսհրատ, 1962թ

5. Ն. Ե. Կովալյով – Մանկավարժության ներածություն, Երևան,Լույս հրատ.,1977թ.:
6. Վ. Ա.Կրուտեցկի -Մանկավարժական հոգեբանության հիմունքները,Երևան,-Լույս հրատ, 1976թ.:
7. Յ. Լ. Կոլոմինսկի - Մանկական կոլեկտիվի հոգեբանություն, Երևան, 1988թ.
8. Ա. Վ.Պետրովսկի - Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974:
9. Շ. Ս. Սիմոնյան -Մանկավարժական տակտ, Երևան, 1975թ.
10. Ս. Մ. Բարդին - Փոխադարձ հարաբերությունների էթիկա. Երևան, 1974թ
11. Դ. Ֆ. Սամույլենկով -ՈՒսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը,
12. Ն. Ի. Բոլդիրև - Դասղեկ աշխատություն. Երևան, 1974թ.:
13. Մ. Մելքումյան - Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին, Երևան 1985:
14. Դ. Ֆ. Սամույլենկով -ՈՒսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը:
15. Ա.Գ. Կովալյով – Հոգեբանություն Երևան, 1970թ.
16. Ա.Գ. Կովալյով - Ընտանեկան դաստիարակության հոգեբանություն Երևան, 1988թ.
17. Ս. Խուդոյան - Անձի զարգացման ճգնաժամային տարիքը Երևան, 2004թ.
18. Ա. Վ. Պետրովսկի - Տարիքային և մանկավարժական հոգեբանություն Երևան, 1977թ.
19. Ա. Նալչաջյան - Հոգեբանության հիմունքներ Երևան, 1997թ.

aniedu.am

В. А. Мухина - Возрастная психология - Москва, 2000г.
В. С. Обухова - Детская психология - Москва, 1996г.
И. С. Кон - Психология старшеклассника - Москва, 1980г.
http://psychologylib.ru/books/item/f00/s00/z0000020/index.shtml
http://www.nnmama.ru/content/vospitanie/Upperschool/
http://www.aniedu.am/

և այլն:

1.Վ. Օհանյան, Ս. Մարգարյան, Լ. Վ. Առաքելյան, Գաբրիելյան, Հ. Ղազարյան, Լ. Ռ Ալավերդյան, Մաթևոսյան, Ս. Վիրաբյան Ս. Հովհաննիսյան, <<Նախնական զինվորական պատրաստություն 8-րդ դասարան Երևան 2019թ.>>